



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

21.115

11

.60

E, K.

381

189

10/2006

33

Ի-68

~~301~~

Ի-60

Բ. ԽԵՂԱՎԵՒԽԱՆ Ի-68

1-2

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Անձնագիր

2585

2362

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԱԶԵՐԸ

~~Ի-68~~

209 886

Յաւելուած՝  
Օտար խօսքերի բառթերթ.

Արտաստպած «Մուրճ» ամսագրից



ԹԻՒՂԹ

Էլեկտրաշաբաթ տպարան „ՀԵՆԴՐԱԿԱՆ“ ընկերութեան  
1906 (144)

26 APR 2013

21.115

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ԿՈՎԱՅԻ ՍՊԱԳԻՏԱԿԱՆ — ԹԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

ԳՐԱԴՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԼԱՂԱՋԵԱՆԻԳ

Дозволено цензурою. Тифлисъ, 16 января 1906 г.



4889 - 2010

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓԱԶԵՐԸ



Արդի ժողովրդական տնտեսութիւնը  
կազմում է հազարասոր տարիների  
պատմական զարգացման արդիւնք:  
Գիտութեան խնդիրն է՝ ժողովրդա-  
կան տնտեսութեան հանդէպ, ամենից  
առաջ ճանաչել ու բացատրել այն,  
ինչ որ եղել է և է:  
Պրօֆ. Կարլ Բիւկեր:

Խնդիր մարդկային հասարակութեան ընդհանուր  
կուլտուրական-պատմական զարգացումը, այնպէս էլ  
նրա զուտ տնտեսական զարգացումը ունի իր պատ-  
մական առաջնաթացութեան բնորոշ գարեջրջաները:  
Եւ ինչպէս որ պատմական-սօցիալական գիտութիւն-  
ները պոզիտիւ հիմունքներով հետազոտում են մարդ-  
կութեան պատմական-հասարակական կեանքի երևոյթ-  
ները և մշակում նրանց զարգացման օրէնքները, այն-  
պէս էլ տնտեսագիտութիւնը իր ինքնուրոյն սահմա-  
նում քննում ու վերլուծում է տնտեսական կեանքի  
ողջ կառուցուածքը և նրա առանձին երևոյթները և  
գտնում զրանց զարգացման օրէնքները:

Մնաբակոյս, մարդկային հասարակութեան ընդ-

քի յառաջադիմութեան, նրա ձևերի բարեփոխումների մէջ հիմնական շարժառիթը համարում է իրաւական, հոգեբանական, բարոյական մօմենտները: Մինչդեռ ըստ մատերեալիստական տեսակէտի, ինչպէս որ հասարակական կազմի կրած փոփոխութիւնները անժիջապէս կախուած են տնտեսական կեանքի յարաբերութիւններից, այնպէս էլ տնտեսական կեանքի փոփոխութիւնները առաջնապէս պայմանաւորուած են տեխնիկական միջոցների, արդիւնաբերական յարաբերութիւնների փոփոխութիւններով:

Մեր տեսակէտը լինելու է զուտ մատերիալիստական (մարքսիստական): Ի հարկէ, մեղ զբաղեցնող թեմայի վերնազգիրը լինելով «Տնտեսական» զարգացման ֆազերը», կարելիութիւն չը պիտի տայ մնոյ, մանաւանդ այս հանգէսի էջերում, երկար ծանրանալու ամեն մի ֆազի մէջ հասարակութեան սօցիօլօգիական ստրուկտուրայի կրած փոփոխութիւնների վրայ՝ առաջացած անտեսական ֆակտորների և յարաբերութիւնների ազդեցութեան տակ: Սակայն հասարակական այնպիսի կարևոր երևոյթներ, ինչպէս են օրինակ՝ դասակարգային յարաբերութիւնների կազմաւորումը, և մանաւանդ աշխատանքի բաժանման միջոցով առաջացած սօցիալական խաւերը, տնտեսական փոխազեցութեամբ, —պիտի էական տեղ գրաւեն մեր դիտողութների մէջ:

Մեր նիւթի ծաւալն է՝ նախ համառօտ և քննական դիտողութիւններով յիշատակել տնտեսական զարգացման յայտնի թեօրիաները, ապա փոքր ինչ ընդարձակ շօշափել տնտեսական զարգացման տարրեր ֆազերը, սկսած պատմական հին անցեալից մինչև նորագոյն կապիտալիստական տնտեսութեան ձևը: Վերջին

հանուը կուտուրական զարգացման պատմութեան մէջ, կեանքի բոլոր կողմերի —իրաւական, քաղաքական, մտաւոր, բարոյական, կրօնական, գրական և այլն — հետ միասին տեղ է տալիս և տեխնիքական-տնտեսական կողմին: Սակայն գիտական հետազոտութիւնների այն յատուկ դիրքնօղը, որի համաձայն ուսումնառութեան ենք անտեսական ձևերը, նրանց փոխակերպումները, անտեսական երևոյթների յառաջադիմական ընթացքը, նրանց ներգործումները և այլն, չենք կարող գտնելով մէջ որակով այնքան խոր ու բազմակողմանի ուսումնառութեան նիւթ գտանալ, որքան իր սեփական ձիւղի մէջ, ինքնուրոյն սահմանում:

Մեր կողմից, ընհանուը պատմական-կուտուրական զարգացման քեօրիան բովանդակ կեանքի յառաջադիմութեան հիմնական մղումները որոնելու և հաստատելու ժամանակ ի թիւս այլ պատճառների ուշադրութեան է առնում և տնտեսական շարժառիթը, և իրաւ, վերջինս տալով ստորագաս կամ նախադաս տեղ, նայած թէ այս կամ այն թէօրետիկը ինչ ուղղութեամբ և սկզբունքով (իդէօլոգիական, թէ մատերիալիստական պրինցիպ) է առաջնորդուում իր քննական անսալիզմերի մէջ: Նոյնիսկ զուտ տնտեսական երևոյթների, նրանց ծագման պատճառների և հետեանքների, նրանց տստիճանական զարգացման քննական բացարութեան ժամանակ՝ տնտեսագիտական հին ուղղութիւնը (ամբողջ պատմական դպրոցը, որ այժմ դեռ բազմաթիւ կողմնակիցներ ունի) առաջնորդուում է իդէօլոգիական տեսակէտից. այսինքն տնտեսական կեան-

ինդրում մեր ուղղեցոյցը լինելու է մեծ մասմբ պրօֆ-  
կարլ Բիւխերի (Լայցալիգի համալսարանում) թէօրի-  
ան, ամենայայտնին, ամենատարածուածը և մեր կար-  
ծիքով ամենաճշկրիտը մինչև օրս եղած թէօրի-  
աների մէջ: Ի հարկէ, մենք չպիտի խօսենք այս կամ  
այն փազում տերապետող արդիւնաբերութեան պիտեմի  
մասին, դա ըստինքեան մի առանձին թեմայի նիւթ է  
կազմում: Մենք պիտի ցոյց տանք միայն պատմական  
մարդու տնտեսութեան զանազան ձևերը, նրանց առ-  
տիճանական բարգացումը, հազարաւոր տարիննը, օր-  
գանական զարգացումը, այն որոշիչ կրիտերիումները,  
որոնցով սուր տարրերում են տնտեսական ֆազերը, և  
վերջապէս այն տնտեսական ֆենոմեններն ու հասա-  
րակական երևոյթները, որոնք արդիւնք են աշխա-  
տանքի բաժանման աստիճանական կատարելագործու-  
թեան, մնատեսական փունկցիաների հասունութեան:—  
Ահա այս պիտի լինի մեզ զբաղեցնող ինդիրը:

1

### Տնտեսական զարգացման թէօրիաները.

Ֆրիդրիխ Լիստի թէօրիան: Որսորդական կեանքի, խաչնարածու-  
թեան, երկրագործական կեանքի և ինդուստրիական կեանքի շըր-  
ջաններ: Արդիւնաբերութեան ուղղութիւնը՝ որպէս որոշիչ կրի-  
տերիում:—Բրունօ Հիլդեբրանդի թէօրիան: Բնական իրերի, փո-  
ղաքին և կրեպիտային տնտեսութեան ֆազեր: Փոխանակութեան  
գրութիւնը՝ որպէս որոշիչ կրիտերիում:—Մի շարք թէօրիաներ,  
որոնց հիմնական կրիտերիումը կազմում է աշխատանքի բաժա-  
նումը: Կարլ Ռօտերերտուսի թէօրիան:—Կարլ Մարքսի թէօրիան:  
Ասիական, անտիկ, փէօդալական և արդի կապիտալիստական արխ-  
տեսութեան ֆազեր: Կրիտերիումներ՝ բանուորի իրաւական դիր-  
քը, անտեսական կեանքի թէզիսական, անտիթէզիսական և սին-  
թէզիսական վիճակը, արդիւնաբերութեան տեխնիկան:—Ֆրիդրիխ  
էնգելսի թէօրիան: Սեփական, փոխանակութեան և կապիտալիս-  
տական տնտեսութեան ֆազեր:—Գուստավ Շմօլերի թէօրիան: Ցե-  
ղային, քաղաքային, տեղիտօրիկական և պետական տնտեսութեան  
շրջանները:—Կարլ Բիւխերի թէօրիան (Ժանօթ. Վերներ Զօմբար-  
տի թէօրիան): Տնային փակ տնտեսութեան, քաղաքային և ժո-  
ղովրդական տնտեսութեան ֆազերը:

1

Առաջին թէօրիան պատկանում է գերմանական  
յայտնի տնտեսագէտ Ֆրիդրիխ Լիստին: Նա բաժա-  
նում է ժողովրդի տնտեսական ամբողջ զարգացումը  
չորս տարբեր շրջանների. որորդական կեանք, խո-

նարածաւրիւն, երկրագործական կեանք և ինդուստրիական կեանք<sup>1)</sup>): Լիստը բառացի անուանում է այսպէս, որսոլ-գական դրութիւն, հովուական դրութիւն, ազգիկուլտուրային դրութիւն, ազգիկուլտուր-մանուֆակտուր-առևտուրական դրութիւն, այսպէս վերջին ինդուստրիական շրջանը բաժանում է նա երկու մասի: Այս թէօրիայի սաղմային սկզբնաւորութիւնը գտնում ենք դեռ Արխտուածելի մօտ («Politik» 1 եր.), և ենթադրում է, որ լիստը օգտուել է այդ սիստեմայից:

Մինչև անցեալ դարու 80-ական թուականները լիստի անտեսական զարգացման ուսմունքը սիրով տեղ էր բռնում ակադիմիական շրջաններում, մասնագէտների մօնոգրաֆների մէջ: Եւ նոյն իսկ այօօր պրօֆ. Շենքերդը իր զասագրքի մէջ ընդունում է այդ շրջանները հետեւալ անունները տալով, որսորդական ժողովուրդ, ձկնորս ժողովուրդ, խաշնարած կամ թափառական ժողովուրդ: <sup>2)</sup>

Տնտեսական զարգացման տարբեր ֆազերը ընողշելու համար, լիստը աչքի առաջ է ունեցել, ինչպէս այդ պարզ երևում է իր թէօրիայից, միայն մի հմտական կրիտերիում, այն է արդիսաբերութեան զիսաւոր ուղղութիւնը, այսինքն թէ ինչ իրերի և ինչ ուղղութեամբ արդինաբերութիւն է ունեցել այս կամ այն շրջանում ապրող ժողովուրդը: Մի ընորոշումն, որ նոյնքան անբաւարար է, որքան և մակերելոյթային:

«Անկարելի է նեզրների կամ եւրօպական միջին դարերի անտեսութեան սիստեմի բարոր տարբերութիւնները՝ արդի եւրօպական անտեսութեան հղանակից, բնորուրչել միայն տիրապետող արդինաբերութիւնն ուղղութեամբ» — իրաւամբ նկատում է պրօֆ. Զօմբարտը<sup>1)</sup>:

2

Երկրորդ դեռ բաւական տարածուած թէօրիան պատկանում է Բրունօ Հիլդեբրանդին<sup>3)</sup> Տնտեսական կեանքի ամբողջ պատմական զարգացումը, սկսած ամենահին զարերից մինչև օրս, բաժանում է նա երեք փազերի՝ բնակչութեան տնտեսութիւն (Naturalwirtschaft), վիլյուին տնտեսութիւն և կրեպտային տնտեսութիւն<sup>4)</sup>: Հիլդեբրանդի բաժանական սիստեմի որոշիչ կրիտերիումը, ինչպէս տեսնում ենք, կազմում է փոխանակարեան դրույթը: Հին ժամանակներում, երբ բացակայում էր տնտեսական բարիքների արժէքը որոշող մի ընդհանուր մասշտար՝ փողը, մարդիկ փոխանակում էին իրար հետ բնական երերը, մէկը տալիս էր միւսին այն, որից նա շատ ունէր, և զրա փոխարէն ստանում այն, որին նա կարիք ունէր: Ուշ ժամանակներում արդէն տիրապետող է զառնում փողի տնտեսութիւնը, իր

1) Fr. List, «Das nationale System der politischen Oekonomie» (Արա գրական ժողովածուի մէջ III հատ. եր. 14).

2) Schönb erg, «Handbuch der politischen Oekonomie» (հատ. I եր. 29):

3) Sombart, «Die gewerbliche Arbeit und ihre Organisation» (առև. Հիլդեբրանդի հանդէսը յարբանական տարբերութիւնները, եր. 372).

4) Տնտեսութիւնների հանդէսը յարբանական տարբերութիւնները, եր. 1.

գանազան ֆունկցիաներով: Իսկ նորադոյն շրջանում՝ կապիտալիստական անտեսութեան օրով, արագ զարգանում ու ծաւալում է կրիդետային անտեսութիւնը:

Այս թէօրիան ևս միակողմանի է և մակերեսոյթային: Փոխանակութեան գրութիւնը ըստ ամենայնի չի բնորոշում որևէ է գարեշրջանի ժողովրդի անտեսութեան եղանակը և ոչ էլ լիամփոփ ու հիմնական կրիտերիում կարող է ծառայել, որի աեսակէտից կարելի լինէր ամբողջ անտեսական զարգացումը տարբեր ֆագերի բաժնեւ: Հիգերբանդը տարբերում է անտեսական սիստեմերն ըստ արտաքին սիմպոնիումի, փոխանակ ըստ տեսութեան էական բնոյթի, որ արտադրում է այդ սիմպոնիումի: Այս կոմից այդ թէօրիան մոռանում է փողի մի կարեռը ֆունկցիան՝ արժեքի չափը (Wertmass), որ թէ փողային և թէ կրեդիտային արնատեսութեան մէջ միանգամայն անխախտ է մնում: Եւ վերջապէս աւելացնելու է, որ արդի անտեսութեան շրջանում կրեդիտային կազմը երբէք այն աստիճան չի տիրապետել և դուրս մնել կանխիկ փողի անտեսութիւնը, որ կարելի լինէր նորագոյն դարերի արնատեսական ֆազը կոչել կրեդիտային անտեսութիւն: Այդ թէօրիայի յայտնի կողմանիցն է պրօֆ. Կոնրադը:

3

Այսուհետեւ գալիս է ժամանակադրական կարգով երրորդ կաթեգօրիային պատկանող թէօրիաների մի շարք, որոնց մէջ ընդհանուր է մի հիմնական կրիտերիում. այն է՝ աշխատանիքի բաժանումը:

Այդ խմբի առաջին ներկայացուցիչը համարւում

է պետական կամ կաթեդրեր սօցիալիզմի (Staats—oder Katheder-Socialismus) հայր Կարլ Ռօտբերտուսը: Անուրանալի է, 'ի հարկէ, որ Ռօտբերտուսը առաջինն է եղել իր տեսակում, որ պարզ ու որոշ մատնացոյց է արել այն իրողութեան վրայ, թէ ինչպէս մասնաւոր անտեսութիւնները հետզհետէ կլանւում են հասարակական խոշոր ձեռնարկութիւնների մէջ, թէ ինչպէս անտեսութեան տիրապետող ձեւը՝ նորագոյն դարերում, որ պատմականօրէն պայմանաւորուած մի երկոյթ է, հակադրում է սօցիալական անտեսութեան եղանակին: Նա դարձրել է անտեսագիտական այդ հայացակէտը իր ամբողջ սիստեմի մեկնակէտը, զեռ իր առաջին երկու աշխատութիւնների մէջ: <sup>1)</sup>

Ռօտբերտուսը պարզ որոշում է հին դարերի կըդզիացած անտեսութիւնը՝ կատարեալ անհատական տընտեսութեան գրութիւնը՝ ալպագայ դարերի աշխատանքի բաժանման գրութիւնից: «Աշխատանքի բաժանման հետ, ասում է նա, առաջ է գալիս անհատների մէջ մի խմբակցութիւն, որ կզգիացած անտեսութեան վրայ մի բոլորովին նոր բնոյթ է զրօշմում»: <sup>2)</sup> Իսկ աշխատանքի բաժանման գրութիւնը բաժանում է նա երկու տարբեր շրջանների. առաջին այն շրջանը, ուր զեռ գոյութիւն չունէր կալուածի և կապիտալի հիմնական շահագործութիւնը (առաւելապէս միջին դարերում), ուրեմն և կալւածն ու կապիտալը համապատասխան հասոյթ ու շահ չունէին: Ապա երկրորդ՝ կալուածի և կապիտալի արմատական էքսպլոատացիայի, շահագործման

<sup>1)</sup> Karl Robertus, «Erkenntnis unserer staatswirtschaftlichen Zustände (1842 թ. եր. 67.)

<sup>2)</sup> » «Vierter socialer Brief an von Kirchmann (եր. 77.)

շրջան (նոր ու նորագոյն դարերը), ուր հասոյթն ու շահը իւրաքանչիւր անտեսական ձեռնարկութեան նըպատակն է համարում:

Իօտերետուախթէօրիան զուրկ է սիստեմատիկական խոր ու հիմնական լուսաբանութիւնից. նա չի զարգացրել այդ աւելի ուշ տարիներում՝ իր մտաւոր արտադրութիւնների հասունութեան շրջանում, այլ թողել է այն կիսատ ու թերի վիճակում, ինչպէս նախկին երկերի մէջ է եղել: 1851 թուականից յիտոյ նա այլ ես չի զբաղուել այդ խնդրով:

4

Այդ խմբի թէօրիայի ներկայացուցիչների շարքին են պատկանում նաև Կարլ Մարքսն ու Ֆրիդրիխ Էնգելսը: Տնտեսադիտութեան և սօցիալական զիտութիւնների մէջ եղակի տեղ են զբաւում այդ հանձարեկ մտածողները: Առաջ ոչ ոք այնքան խորաթափանց ու փայլուն կերպով չի ըմբռնել ու պատկերացրել արդի կապիտալիստական արդիւնաբերութեան սիստեմը, նըրա ներքին գաղտնիքը, անտեսական զարգացման պատմական տեսնդինցիան և դրանով պայմանաւորուած սօցիալական կեանքի անժխտելի էվոլյուցիան, ինչպէս Մարքսն ու Էնգելսն են արել: Այնքան բազմաթիւ ու ծանրակշիռ պրօբլեմներ յարուցանող և նրանց լուծում տուող հեղինակները, անտարտկոյս, չեխն կարող չարտայայտուել նաև այնպիսի կարգինալ խնդրի վերաբերմամբ, ինչպիսին է՝ մարդկային հասարակութեան անտեսական զարգացման ֆազերը:

Խոստովանելու է, ի հարկէ, որ Մարքսն ու Էն-

գելսը այնքան խոր ու մասնագիտօրէն չեն զբաղուել չին ու միջին դարերի ժողովուրդների տնտեսութեան դրութեամբ, ուրքան արդի եւրօպական ազգերի արնակութեան ու արդիւնաբերութիւնների ձևերով, որպէս զի կարողանային անտեսական աստիճանական զարգացման ուսմունքի մէջ ևս կօրինիէններ, պարագլուխներ լինել: Այնպէս որ Մարքս-Էնգելսի այդ սահմանում արած հետազօտութիւնը մի ուրոյն սիստեմ չի կազմում, կարու է լայն, փաստալից լուսաբանութեան: Սակայն միանգամայն անուրանալի է, որ այդ երկու մտածողների տուած հատուկտոր բացատրութիւնները, մանաւանդ նրանց առաջարկած կրիպերիումները, իրանց զանազան երկերի մէջ, աւելի պարզ ու որոշակի են շեշտում անտեսութեան եղանակների տարբերութիւնները պատմական շրջաններում, քան միւս թէօրիտիկներն են արել: Եւ պրօֆ. Բիւխերի յաջողութեամբ պսակուած թէօրիան, ինչպէս այդ յետոյ կը տեսնենք, ամենից շատ ազդուած է Մարքս-Էնգելսնեան հայեցակէտից:

Մարքսի և Էնգելսի մօտ տարբերում են իրարից թէօրիայի ձևակերպումները, թէև մի և ընդհանուր է այն հիմնական հայեցակէտը, որ ելակէտ է ծառայել նրանց գիտողութիւնների համար: Երկուսի մօտ յաձախ են շեշտում երկու կամ աւելի «տնտեսութեան ու արդիւնաբերութեան եղանակների» տարբերութիւնները:<sup>1)</sup> «Ընդհանուր գծերով, ասում է Մարքսը, կարող են ասիական, անտիկ, ֆէօդալական և արդի կապի-

1) Տե՛ս K. Marx und Fr. Engels, «Das Kommunistische Manifest» (եր. 10<sup>1</sup>) K. Marx, «Das Elend der Philosophie» (եր. 105). Fr. Engels, Dühring» (եր. 254).

տալիստական արդիւնաբերութեան եղանակները համարուել որպէս պրօգրեսիւ էպօխաներ տնտեսական-հասարակական կազմակերպութեան մէջ»<sup>1)</sup>:

Առանձին-առանձին ծանօթանանք Մարքսի և Էնգելսի տեսական ձեակերպումների հետ:

Մարքսի մօտ կարելի է գտնել հետեւալ հիմնական կրիտերիումները, որոնք որոշում են զանազան տնտեսական-պատմական փաղերի տարբերութիւնները:

1. Բանուորի իրաւական դիրքը: Մարքսի թէ առաջին և թէ վերջին աշխատութիւնների մէջ, սկսած «Կոմունիստական Մանիֆեստից» մինչև «Կապիտալը» (օրինակ 1 հատ. եր. 43, 133 և այլն) շատ տեղեր են շեշտում շահագործող ու շահագործուող, տիրապետող ու ենթարկուող զասակարգերի փաստական և իրաւական դրութիւնները: Շահագործուող տարբը նին գարերում եղել է սորուկ, միջին գարերում՝ ճորտ և նորագոյն գարերում՝ իրաւապէս ազատ բանուոր. սա էական կրիտերիում է համարում Մարքսի մօտ, տարբերելու տնտեսական զարգացման զանազան շրջանները: Նոյն իսկ մարքսիզմի քննազաններից մէկը՝ պրօֆ. Լ. Շտայնը, Մարքսի այդ կրիտերիումը համարում է կիրակ տարբերիչ մօդուսը տնտեսական աստիճանների: Նա դուռը է Մարքսի մօտ հետևեալ տնտեսական շրջանները. սարկական տնտեսութիւն, ճորտային տնտեսութիւն և ոցիալիստական տնտեսութիւն:<sup>2)</sup>

2) Տնտեսական ողջ կառուցուածի թեզիսական, ան-

1) Marx, «Zur Kritik der politischen Oekonomie», յառաջաբան եր. XII, նոյնը նաև «Lohnarbeit und Kapital»-ի մէջ (եր. 15).

2) L. Stein, «Die sociale Frage im Lichte der Philosophie» (եր. 383): Վերջերս կարև կառուցին և փորձել է մի բնքնուրոյն թէօ-

տիրեզիսական եւ սինթեզիսական վիճակը: Մարքսի այս կրիտերիումը հիմնուած է Հեղելի դիալեկտիքական տրիադի (երբորդութիւն) վրայ, և ձևակերպում է այսպէս.

### Թեզիս.

### Անտիթեզիս.

### Սինթեզիս.

- |     |  |  |  |
|-----|--|--|--|
| I   | Նախնական կօ-<br>մունիզմ:   | Ապրանքային ար-<br>դիւնարերութիւն.  | Գիտակցական կօ-<br>մունիզմ:                                     |
| II  | Անմիջապէս հա-<br>սարակական-<br>տնտեսական-պատմական փաղերի տարբերութիւն:   | Անձրագիր արդիւ-<br>նարերութիւն:  | Միջնորդապէս հա-<br>սարակականացած<br>ցած արդիւնա-<br>բերութիւն: |
| III | Բանուորները բանուորները զըր-<br>տէր են արդիւ-<br>նարած են արդիւ-<br>նարած միջոցներին աւելի<br>նար. միջոցների, նար. միջոցներից: | Բանուորները զըր-<br>տէր են գանոնում արդիւն.<br>միջոցներին աւելի<br>բանուորները տէր |  |

Այս տրիադի մէջ պատկերանում է մեզ մարդկային հասարակութեան տնտեսական դրութեան գի-ալեկտիքական զարգացումը, բաժանուած խոշոր զարեցջանների. սկզբնական կօմունիստական շրջան, մասնաւոր սեփականութեան շրջան և ապագայ սօցիալիստական շրջան, որի իրականացումը ըստ Մարքսի զարգաման թէօրիայի նոյնքան անհրաժեշտ է, որքան անհրաժեշտ է եղել առաջին և երկրորդ տնտեսական-հասարակական շրջանների դարաւոր գոյութիւնը:

3. Տնտեսական աստիճանների տարբերակիւնը ըստ արդիւնաբերութեան տեխնիկայի: Այս կրիտերիումը մեծ

բիս տալու, որ մի քանի որոշիչ կրիտերիումների կօմբինացիա է կազմում: Նա բաժանում է այսպէս. բնական իրերի տնտեսութիւն, ֆէօդալիստական տնտեսութիւն, համքարական-մենավաճառ տնտեսութիւն (Zünftige Monopolwirtschaft) և ապրանքային տնտեսութիւն. Նա վերջինս կրկն բաժանում է՝ պարզ ապրանքային տնտեսութիւն: Կապիտալիստական տնտեսութիւն: (Տես «Agarfrage» եր. 60—61).

տեղ է գրաւում Մարքսի, ինչպէս և էնգելսի տնտեսական դիտողութիւնների մէջ, և այդ մասնաւանդ այն դէպքում, երբ նրանք պատմական մատերիալիզմի տեսակէտից ցոյց են տալիս, թէ ինչպէս հասարակական-քաղաքական կեանքի կերպարանափոխութիւնը անմիջապէս և հիմնարկում է տնտեսական ֆակտորներից, իսկ վերջիններս իրանց կողմից անմիջապէս ենթակայ են արդիւարերութեան տեխնիքական յարաբերութիւններին, աշխատանքի միջոցներին: «Տնտեսական էպօխաները, ասում է Մարքսը, տարբերում են ոչ թէ նրանով, թէ ինչ է արդիւնաբերում, այլ նրանով, թէ ինչպէս, աշխատանքի ինչ գործիքներով է արդիւնաբերում: Աշխատանքի միջոցները կազմում են ոչ միայն մարդկային աշխատանքի ոյժի գարգացման մասշատը, այլ և այն հասարակական յարաբերութիւնների յայտանշանը, ուր նրանք բանեցնուում, գործադրում են»:<sup>1)</sup> Աւելի որոշ արտայայտութեամբ գըտնուում ենք նոյնը Մարքսի պատմական մատերիալիզմի կլասիք դեֆինիցիայի, որոշման մէջ, հէնց առաջին տողերում: «Հասարակական արդիւնաբերութեան մէջ, ասում է Մարքսը, առաջ են ընթանում որոշ, անհրաժեշտ, մարդկանց կեանքից անկախ յարաբերութիւններ՝ արդիւնաբերութեան յարաբերութիւններ, որոնք համապատասխան են արտադրողական նիւթական ոյժերի գարգացման աստիճանին»:<sup>2)</sup>

Այլ կերպ է ձևակերպում թէօրիան էնգելսը. և պէտք է ասել, որ նրա յետագայ գրուածներում, մա-

<sup>1)</sup> Marx, «Kapital» (Համ. եր. 142).

<sup>2)</sup> Marx, «Zur Kritik der politischen Ökonomie», յառաջաբ. եր. XI.

նաւանդ նրա «Ընտանիքի, մասնաւոր սեփականութեան և պետութեան ծագումը» (1884 թ.) վերնագրով երկի մէջ, աւելի հասունացած և սիստեմատիկաբար ներկայացրած վիճակի մէջ ենք գտնում տնտեսական զարգացման ուսումները, քան Մարքսի մօտ:

Էնգելսի թէօրիայի մէջ ամենահիմնական կրիտերիումը կազմում է աշխատանքի բաժանումը կամ անդամանատումը (Zergliederung) իրերի արդիւնաբերութեան սլրօցեսուի մէջ: Աշխատանքի բաժանումը, իրեւ կրիտերիում ընդունել է եւ Մարքսը (տես օրինակ «Կապիտալ» եր. 46, 78, 322 և այլն), սակայն էնգելսն է եղել գլխաւորապէս, որ այդ կրիտերիումը տնտեսական զարգացման ֆազերը բնորոշող ուսումների հիմք է ծառայեցրել: Էնգելսը որոշում է տնտեսական զարգացման երեք գլխաւոր էտապները:<sup>1)</sup>

1. Սեփական տնտեսութիւն — արդիւնաբերութիւն սեփական կարիքների համար:

2. Փոխանկութեան տնտեսութիւն — որ երեք տարբեր աստիճաններ ունի:

ա. Իրեւ պատմական երևոյթ, երբ փոխանակում է միայն առաջ բերքերի աւելորդ մասը:

բ. Իրեւ կանոնաւոր, մշտական երևոյթ, երբ կենսական պիտոյքների արդիւնաբերութեամբ զատում են խաշնարած և երկրագործ ցեղերը և այդպիով մըշտական կարիք է զգացւում տարբեր իրերի փոխանակութեան:

շ. Իրեւ անհրաժեշտ, երբ կը դրագործութիւնը և ձեռնարհեստութիւնը են իրարից և գը-

1) Fr. Engels, «Anti-Dühring» (եր. 138), Engels, den Ursprung der Familie, des Privateigentums und des Staats», (121 թ.)

բաւում արդիւնաբերութեան զատ-զատ սահմաններ,  
տոն տալիս սօցիալական տարբեր խաւերի:

3. Կապիտալիստական և նետեսութիւն—որ բնորոշում  
է ապրանքային արդիւնաբերութեամբ, և թակայ կա-  
պիտալիստի բացառակի ղեկավարութեան:

5

Այսուղ յիշելու է նաև պրօֆ. Շմօլերի թէօրիան:  
Շմօլերը տարբերում է հետևեալ տնտես. ֆազեր.

1. Ցեղային, գիւղական կամ շրջանային տնտե-  
սութիւն,

2. Քաղաքային տնտեսութիւն.

3. Տերիտորիական տնտեսութիւն.

4. Պետական տնտեսութիւն.

Այսուղ ևս տնտեսական շրջանների տարբերու-  
թեան էական կրիտերիումը համարում է աշխատան-  
քի բաժանումը: Սակայն մի հիմնական կէտում Շմօ-  
լերի թէօրիան տարբերում է այդ կաթեգորիային  
պատկանող միւս թէօրետիկներից: Շմօլերը հիմնաւոր-  
ում է զանազան տնտեսական սիստեմների տարբերու-  
թիւնները բոլորովին այլ կերպ, քան միւս հեղինակ-  
ները: Մինչ դեռ Ռօտրերտուսը, Մարքսն ու Էնգելսը և  
Բիւլիերը—ինչպէս յետոյ կը տեսնենք—զանազան տըն-  
տեսական շրջանների տարբերիչ կողմերը բացատրում  
են զուտ կառւզալ (պատճառակայական) կերպով—բացա-  
ռապէս պայմանաւորուած արգիւնաւէտ ոյժերի ներ-  
գործութեամբ և տնտեսական-արդիւնաբերական յարա-  
բերութիւնների օրգանական զարգացումով, —Շմօլերը,  
ընդհակառակը, առաջնորդում է զուտ թելէորգիական  
ոկրունքով (նպատակայարմարութեան ոկրունք):

Քոտ Շմօլերի, տնտեսական զարգացման ֆազերի մէջ  
տարբերութիւններ ծագում են այն պատճառով, որ-  
ով էտու է պէտք է զանազան—առաւելապէս քակաքական  
նպատակներ իրականացնելուն: «Նշանակալից է, առում է  
Շմօլերը, տնտեսական կեանքի կապակցութիւնը ոռ-  
հասարակ սօցիալական և քաղաքական կեանքի էական  
ու ղեկավար օրգանների հետ... տնտեսական-սօցիալա-  
կան էական հիմնարկութիւնների կախումը քաղաքա-  
կան կարևորագոյն մարմիններից և ֆակտորներից: <sup>1)</sup>

Շմօլերի «Նպատակայարմարութեան» ուսմունքը  
չունեցաւ ոչ մի կողմանկցութիւն նոյն իսկ իր աշա-  
կերանների և պատմական գպլոցի (որի յայտնի ներ-  
կայացուցիչն ինքն է) կուսակիցների կողմից: Նրա  
թէօրիան սուր քննազատութեան ենթարկուեց սօցիա-  
լիստների, ապա Բիւլիսերի և Զօմբարտի կողմից:

6

Մինչև այսուղ մենք բաւականացնք տնտեսա-  
կան զարգացման ֆազերը բնորոշող այն թէօրիանների  
յիշատակութեամբ, որոնք յայտնի են գրաւում տըն-  
տեսագիտութեան մէջ: Ընդհանուր առմամբ կարելի է  
տսել, որ այդ բոլոր թէօրիանները—մի կողմը թողնելով  
մէկի կամ միւսի մասնաւոր առաւելութիւնները—մնացել  
են թերի, անմշակ և անսսիստեմ վիճակի մէջ: Նրանց  
բոլորի մէջ—բացառութեամբ Մարքս-Էնգելսեան թէօ-  
րիանների—պակասում է խոր ու բազմակողանի լուսա-  
րանութիւնը, կրտիկական ոգին: Նրանց շատերի մէջ

<sup>1)</sup> Städtische, territoriale und staatliche Wirtschaftspolitik (in Schmollers Forschungen (համ. VIII (1884) եր. 16—17)

տնտեսական շրջանների տարբերութիւնները որոշութիւնները միացել են միայն որպէս պօստուլատ, առանց ընդարձակ ու լրացուցիչ բացատրութիւնների, հիմնաւորութեան:

Միակ թէօրիան, կամ, ինչպէս ասում են, տնտեսագիտութեան վերջին խօսքը այդ սահմանում, «որ մինչև օրս (ընդամնը 12 տարուայ ընթացքում, 1893 թուականից սկսած) խիստ ժողովրդականութիւն է վաստակել գիտական շրջաններում, համարում է պրօֆեկտուր Բիւլիսերի թէօրիան<sup>1)</sup>: Անտարակոյս Բիւլիսերի աեսութիւնը կրում է նախորդ գիտնականների — առաւել Մարքունգելուեան — աեսութիւնների որոշ դրօշմբ: Սակայն այն լրիւ սկսեմը, քննական հետազոտութիւնը, փաստերի ահագին տարափը, որ նա զանազան ֆազե-

<sup>1)</sup> Այսակե լիշելու է, որ Բիւլիսերի աեսութիւնից յետոյ, գերներ Զօմբարաք և փորձեց (տես «Die gewerbliche Arbeit und ihre Organisation» in Archiv für sociale Gesetzgebung und Statistik XIV համ. 1 և 2 տետրը, էր 392, 1899թ.) այնուհետեւ նոյնը բնդարձակած իր «Der moderne Kapitalismus» գրքի առաջին հատորում, (էր. 50, 1902թ.) մշակել անտեսական գորգացման ուսմունքը: Նա ևս եւրեք մասի է բաժանում անտեսական գորգացումը, այն է անհնարինական միխանցին և նասարակական անտեսութիւն: Առաջնակարգ գրիտերիում զօմբարաք որոշում է անտեսական գորգացման անդամական գորգացութիւնը, կազմում է նրա մօտ արդինական բանական գորգը տարբերութիւնը, կազմում է նրա մօտ արդինական բոլոր շրջաններում: Առաջ, նահապետական գործիքների շրջանում, խիստ սակաւ է եղել արդինական էտութեան ոյժը, նեազնետէ, զարժիքների կատարելագործութեամբ, նա հասել է ներկայ շողու և էլետրականութեան օրով զարգացման պօտենցիել աստիճաննին: Որոյնեւ համար թէօրիան քիչ է տարբերում Բիւլիսերի ուսմունքից, այդ պատճառով աւելորդ նենք համարում առանձին դիմութիւնների նիւթ գործներու: Բիւլիսերի թէօրիայի առաւելութիւնները չենք գործում Զօմբարտի մօտ նոյն շափով:

րի անտեսական սիստեմների ընդարձակ նկարագրութեամբ և էտնօգրաֆիական բազմաթիւ լրացուցիչ տեղեկութիւններով տալիս է, — համարում է Բիւլիսերի եղակի ծառայութիւնը: Բայ այդ թէօրիայի պիտի ծանօթանանք մենք անտեսական զարգացման ֆազերի հետ:

Բիւլիսերի աեսութիւնը ընդգրկում է իր մէջ անտեսական զարգացման երեք խոշոր ֆազեր՝ սկսած պատմական հին դարերից մինչև արդի եւրոպական անտեսութեան աստիճանը: Նա ձևակերպում է այսպէս<sup>1)</sup>:

1. Տնալին լիակ տնեսուրեան աստիճան (Die Stufe der geschlossenen Hauswirtschaft). — Արդինաբերութիւն զուտ սեփական կարիքների համար, փոխանակութիւնից (մշական) զուրկ անտեսութիւն: Այդ աստիճանի վրայ իրերը սպառում են այն անտեսութիւն մէջ, ուր նրանք արտադրում են:

2. Քաղաքային տնեսուրեան աստիճան (Die Stufe der Stadtwirtschaft). — Արդինաբերութիւն վաճառորդների համար կամ անմիջական փոխանակութեան աստիճան: Այդ աստիճանի վրայ իրերը արդինաբերական անտեսութիւնից անմիջապէս անցնում են սպառողական անտեսութեան մէջ:

3. Փոլուրդական տնեսուրեան աստիճան (Die Stufe der Volkswirtschaft). — Ապրանքային արդինաբերութիւն, իրերի շրջանառութեան աստիճան: Այդ աստիճանի վրայ իրերը սովորաբար անցնում են մի շարք անտեսութիւնների բազով (շրջանառութեան պրօցես), նախ քան սպառման համանելը:

<sup>1)</sup> K. Bücher, «Die Entstehung der Volkswirtschaft» (Յ-րգ Հրատ., էր. 108)

Բիւխերի թէօրիայի մէջ ևս հիմնական կրիտե-  
րիումը կազմում է աշխատանքի բաժանումը: Բացի գը-  
րանից այդ թէօրիայի մէջ ուշադրութեան է առնում  
և մի այլ խիստ կարեոր մօմենտ, որ ոչ մի թէօրետիկի  
մօտ այնքան փաստալից ու կառւզալ չի բացատրվում,  
ինչպէս Բիւխերի մօտ: Դա կազմում է այն յարաբերու-  
թիւնը, որ գտնում է իրերի արդիւնաբերութեան կամ  
արդիւնաբերողների և իրերի սպառման կամ սպառող-  
ների մէջ. ուրիշ խօսքով դա կազմում է այն ճանա-  
պարհի երկարութիւնը (Weglänge), որով իրերը արդիւ-  
նաբերողի ձեռքից համում են սպառողի ձեռքը:

Եթէ ուզում ենք մասնաման բնորոշել անտեսա-  
կան այս երեք ֆազերը և ցոյց տալ նրանց պատմա-  
կան գարգացման խոշոր տարրերութիւնները, ապա  
մենք պէտք է ուշադրութեան առնենք բացառապէս  
նրանց ժիպիթական առանձնայատկութիւնները, մի կողմէ  
թողնելով այն մասնաւոր ու ն ցողական երևոյթները,  
որոնք խոտորում են այս կամ այն պատմական շըր-  
ջանում տիրապեսող անտեսութեան ընդհանուր սիս-  
տեմից: Այդ պատմահական և մասնաւոր երևոյթները  
լինում են երբեմն հին շրջանի մասցորդներ կամ ապա-  
գայ շրջանի սկզբնաւորութիւն:

11

Տնային փակ տնտեսութիւն.

Տնային փակ տնտեսութեան բնոյթը—Հողը անտեսական  
գարգացման առաջին փառում: — Արդիւնաբերութիւն սեփական  
կարիքների համար: — Աշխատանքի բաժանումը բնակների մէջ: —  
Ստրկութեան կլասիկ գարեջշանը: — Յունական և հոնվելսական  
տնտեսութիւնը: — Ստրկատիրոջ իրաւունքը: — Կոչումները անային  
տնտեսութեան մէջ: — Պետութեան տնտեսութիւնը: — Հարուսաներ  
և աղքատներ, աղատներ և ստրուկներ: — Բօմանական և զերմա-  
նական ցեղերի անտեսութիւնը միջին զարերի սկզբներում: —  
Ճորտային անտեսութիւն: — Ֆէօրաներ և ճորտեր: — Փոխանակու-  
թեան երեսյթը անտեսութիւն առաջին փազի մէջ:

1

Տնային փակ տնտեսութեան պատմական փազը  
բնորոշում է նրանով, որ այնտեղ արդիւնաբերութեան  
և սպառման տնտեսութիւնը ամբողջովին ամփոփուած  
է տնային փակ շրջանակի մէջ: Իւրաքանչիւր տան մէջ  
արդիւնաբերութեան չափն ու եղանակը որոշում է  
ընտանիքի անդամների կարիքներով: Իւրաքանչիւր  
տնտեսական իր կամ բարիքնում նիւթից սկսած մինչև  
պատրաստի արդիւնք գարնելը, արտադրուում ու սպառ-  
ում է միենոյն նեղ շրջանակի մէջ, առանց որևէ միջ-  
նորդական ձեռքի: Այդ երկու տարրեր գործողութիւն-

ները՝ արտադրութիւն և սպառում, կազմում են մի անընդհատ, սերտ միացած, միուրոյն պրօցես:

Մի այդ կարգի ինքնամփոփ ու աւտօնում տնտեսութիւն, ինչ ասել կուզէ, սերտ շաղկապուած է հոլի հետ: Եղաւ տնտեսող սուբիեկտը որսորդ թէ ձկնորս, որոնք իւրացնում են բնութեան առաջարկած առատ բերքը, եղաւ նա թափառական խանարած, որ չուում է իր հօսով և տուն ու գոյքով այս ու այն տեղ, եղաւ նա հողագործ և այլն, այդ միենոյն է—բոլոր գէպքերում տնտեսողի աշխատանքը որոշում է այն կտոր հողով, որի վրայ նա կարգաւորում է: Եւ որքան նա յառաջադիմում է իր ըմբռնողութեամբ և տեխնիքական ճարպիկութեամբ, որքան ծրագրուած է բազմակողմանի կերպով է կազմաւորում նրա կարիքների բաւարարութիւնը, այնքան մեծ է նրա կախումը հողից, այնքան նա արագ է տիրապետում հողին և նրան հետզհետէ ինտենզիւ շահեցնում:

Տնային փակ տնտեսութեան շրջանում ընտանիքի անդամները ոչ միայն քաղում էին բնութեան բերքերը, այլև նրանք պէտք է իրանց սեփական աշխատանքով պատրաստէին, կարենոր գործիք ու կարասիք, պէտք է հում նիւթերին կազմ ու ձեւ տային և գործածական իրեր շինէին: Եւ որովհետև անհատական ոյժերը բաւական չէին աշխատանքի այդ բոլոր ճիւղերում գործելու, այդ պատճառով աշխատանքի ֆունկցիաները բաժանում էին տան անդամների վրայ—ըստ սեփի, տարիքի, անհատական ոյժի ու ճարպիկութեան: Դժուար ու բարդ աշխատանքը միացնում է մի քանիսի ոյժերը իրար հետ: Այդպիսով, տնտեսութեան այդ շրջանում արդէն հետզհետէ զարգանում է աշխատանքի բաժանումը և աշխատանքի խմբակցութիւնը, որոնց սկզբնա-

կան արմատները գտնում ենք դեռ վայրենի ցեղերի մէջ, նախապատմական շրջանում:

Սակայն ընտանիքը չէր կարող աշխատանքի այդ երկու տարբեր ձևերը իր մէջ ամփոփել ու գործածել, եթէ նա այսօրուայ ընտանիքի կազմն ունենար—ծնողներ, որդիք և երբեմն ծառայ կամ աղախին: Հին նահապետական ընտանիքը ներկայացնում էր մի քանի սերունդներ ու արիւնակիցներ ամփոփող բազմանդամ գերդասուն (Sipprea)<sup>1)</sup>, որի անդամները՝ սկզբում կազմակերպուած մայրական, իսկ յետոյ հայրական իրաւունքներով, համայնաբար տիրում էին հողի ու գոյքի, միասին վարում էին տնտեսութիւնը, ներկայացնում էին մի սերտ շաղկապուած իրաւական միութիւն: Մարդ անհատը գերդաստից դաւրս ազատ թռչուն է, նա չունի ոչ մի իրաւական, տնտեսական ապահով գոյութիւն, կարիքի մէջ չունի որևէ օգնող, ծեծուելու գէպքում չունի վրէժինդիր լինող, մահուան դէպքում չունի իրան թաղող և այլն<sup>2)</sup>: Նահապետական բազմանդամ ընտանիքներ կարելի է գտնել դեռ այժմ իսկ հարաւային սլաւոնների, ուռունների, կովկասեան ցեղերի, հինդուսների մօտ:

Այդ կարգի մեծ ընտանեկան խմբակցութիւնների

1) E. Grosse, «Die Formen der Familie und die Formen der Wirtschaft» VIII գլուխը:

2) Աֆրիկայում կարելի է գտնել դեռ այդ տեսակ պատկեր: Ընեպին իրաւական զաղափարների մէջ—ասում է Բուխներ—գլխաւոր մօմենտ է համարում այն հանգամանքը, որ իրաւական անհատ համարում է ոչ թէ անձը, այլ համարնիքը: Իրաւունքներն ու պարտականութիւնները վայելում է ինքը համայնքը անսահման կերպով: Նա պատասխանատու է իր անդամների բոլոր արածների համար»: M. Buchner, «Kamerun» եր. 118.

մէջ հնարաւոր էր լինում աշխատանքի բաժանումը բաւական ընդարձակ չափով գործադրել։ Տղամարդիկ ու կանայք, մայրեր ու մանուկներ, հայրեր ու պապեր — իւրաքանչիւրը ունէր իր որոշ գերը իրերի արդիւնարերութեան և տնարարութեան մէջ։ Արիւնակցութեան կապերով, հնազանդութեամբ և փոխադարձ յարգանքներով կազմում էին նրանք միներդաշնակ միւթիւն։ Սակայն երբ ժամանակի ընթացքում կազմալուծում է բազմանդամ ընտանիքները, այդ դէպքում ընտանիքը տնտեսական անհրաժեշտութիւն է զգում ընդունելու իր մէջ օտար (ոչ արիւնակից) տարրեր, այդ տնտեսական երևոյթից ծագում է սրբութեան ինստիտուցիան։ Դրանով արդէն հնարաւորութիւն է ձեռք բերւում անխախտ պահելու տնային տնտեսութիւնը և մինուն ժամանակ ընդարձակելու կարիքների բաւարարութեան շրջանը։ Տան աշխատանքի բաժանումը կամ խմբակցութիւնը դառնում է աւելի բազմաճիւղանի, որքան աւելի է շատանում տան տիրոջ արամազբութեան տակ գտնուած ստրուկների թիւը։ Աշխատանքի զանազան փունկցիաները՝ հողագործութիւնը, հացահատիկներ աղալ, հաց թիսել, մանել, գործել, գործիքներ պատրաստել, անսասուներ խնամել և այլն, հետզհետէ դառնում են տնային մասնաւոր կոչումներ՝ բարձուած անազատ աշխատաւորի շինքին։ Եւ որքան հաջուսատ է տան տէրը, մեծ նրա տնտեսութիւնը, այնքան էլ բազմակողմանի և փարթամ կերպով կարող է կատարելագործուել նիւթեր կոնք կոփելու և ազնուացնելու տեխնիկան։

2

Այսպիսի բնոյթ ունէր յոյների, կարթագեցիների և հոռվմէացիների տնտեսութիւնը։ Բոտրերտուում անուանում է զա տնատնտեսութիւն (Oikenwirtschaft), յունական օկոս — տուն — բառից, որ նշանակում է տնտեսական միութիւն, կազմակերպութիւն։ Օյկոսը ամփոփում է իր մէջ ոչ միայն ընակարան, այլ և զբանականին տնտեսուղ մարդկանց խումբը, որի անդամներին յոյնը օկետաւ է անուանում։ մի խօսք, որ իր պայմանական հասկացողութեամբ սահմանափակում էր միայն տնտեսական ստրուկների վրայ, որոնք կրում էին այն ժամանակ տան ամբողջ աշխատանքը։ Միենոյն միտքն ունի հոռվմէական familia խօսքը։ famuli նշանակում է տան ստրկուկները, իսկ pater familias — ընտանիքի ստրուկների տէրը, որի ձեռքն էր կենտրոնանում ամբողջ տնտեսութեան արդիւնքը։ Տան ոչ մի անդամ չէր վաստակում իր համար, այլ pater familias-ի համարնրան էր վերապահուած իւրաքանչիւրի կեանքի ու մահուան իրաւունքը։

Եւ տան հօր այդ տիրական իրաւունքի շրջանում, որ տարածւում էր տան բոլոր արիւնակիցների և օտարների վրայ, տնային փակ տնտեսութիւնը աւելի էր ամբակազմ միութիւն ստանուած և արդիւնաւէտ գանում, քան հին նահապետական գերդաստանի մէջ, որ զուտ արիւնակիցների խմբակցութիւն էր կազմում։ Ստրկատիրոջ այդ անսահման իրաւունքներով չքացել էր անհատական գոյութիւնը, պետութիւնն ու իրաւունքը ձանաշում էին միայն ընտանիքներ, մարդկանց խմբակցութիւններ, նրանց համար փոյթ չէր, թէ

ինչ էր կատարւում ընտանեկան հարկի տակ. նրանք կանոնաւորում էին յարաբերութիւնները ոչ թէ մարդ անհատների, այլ տների մէջ:

Կլասիք գարեշրջանում ստրկատէր հարուստ տան աշխատանքը ունէր բազմաթիւ ֆունկցիաներ: Դեռ 17 րդ դարում հօլանդացի Տ. Պոմպա անունով մի հեղինակ թւում է մօտ 146 զանազան աշխատանքի ֆունկցիաներ, որ ունէին հոռվմէական հարուստ տների ըստրուկները. Այսօր նոր հետազօտութիւնը աւելի է ցոյց տալիս: Հոռվմէական իւրաքանչիւր հարուստ տան սրտրուկ բանւորութիւնը բաժանում էր երկու մասի: Առաջինը կոչում էր *familia rustica*, այսինքն արդիւնաբերական նպատակների ծառայողներ: Այդ կաթեգօրիայի մէջ էին մտնում բոլոր արհեստային, կոչումները, որ վարում էին ստրուկները, այն է՝ երկրագործութիւն, խաշնարածութիւն, անասնապահութիւն, մանուածագործութիւն ոստայնանկութիւն, գերձակութիւն, գարբնութիւն և այլն: Երկրորդ մասը կոչում է *familia urbana*, այսինքն վարչական նպատակների ծառայողներ: Ստրուկ բանւորութեան այդ կաթեգօրիայի մէջ ամփոփուած էր այն ստուար պերսօնալը, որ ծառայում էր տան տիրոջ և տիրունուն: Այսպէս օրինակ տիրոջ գոյքի և կարողութեան կառավարիչը՝ իր գանձապահով, հաշուապահով վարձու տուած տների կառավարիչներով: Ապա գալիս են՝ տան վերակացուն, դռնապահն, սենեակների, դահլիճների, կահ-կարասիքի վրայ հսկողները, տակառապետը, մառնապետը, ահազին քանակով խոհանոցային ծառայողներ, ապա սպասառներ, որոնք պառյու են գալիս իրանց տիրոջ շուրջը՝ լուսացնելու, ճաշի, ընթրիքի, քնելու ժամանակ, հիւրեր ընդունելու, զանազան դուար

թիւնների և խրախճանքի, գուրսը զրօննելու քաղէներին և այլն և այլն: Դա մարդկանց մասսայական կուտակումներ էին—խոնարհ ու հնազանդ, կամազուրկ ու անգիտակից ստրուկներ — ենթակայ կօնֆորմների մէջ յղփացող փոքրիկ արիստօկրատիայի: Ֆրիդրիխ էնգելմարտ տալիս է մեզ վիճակագրական տեղեկութիւններ Աթէնքի և Կօրնթոսուի ստրուկների քանակի մասին: Աթէնքը ունէր իր ամենածաղկած շրջանում 90,000 ազատ քաղաքացիներ՝ կանայք ու մանուկներ միասին հաշուած, մինչդեռ երկու սեռի ստրուկները կազմում էին 365,000 հոգի իսկ օտարների և ազատուածների թիւը՝ 45,000 էր: Կօրնթոսում ստրուկները կազմում էին 460,000 հոգի՝ տասն անգամ աւելի աշատ քաղաքացիներից<sup>1)</sup>:

Այլ կերպ չէր անտեսում անգամ ինքը՝ պետութիւնը: Սաորին բոլոր պաշտօնեաներն ու ծառաները ստրուկներ էին: Ստրուկները կառուցանում էին ձանապարհներ, փողոցներ, աներ. մշակում, ցանում էին հող, աշխատում հանքերում և այլն: Ոստիկանները, գատառները, բանտառահները, պետական գանձապահները, գրադիրները, մագիստրատում, տաճարներում ծառայողները և այլն և այլն—բոլորն էլ ստրուկներ էին: Իւրաքանչիւր գօրապետ կամ նահանգական բարձր պաշտօնեայ իր պաշտօնատեղին դնալու ժամանակ ուղեկցւում էին բազմաթիւ պետական ստրուկներով: Այդ ստուար պերսօնալի ապրուստը հոգալու համար եկամուտի աղբիւրներ էին կազմում պետական հողերը և գաւառներից սպացած տուրքերը:

<sup>1)</sup>) Fr Engels, «Der Ursprung der Familie, des Privateigenthums und des Staates» Եր. 117 և 175.

Այսպիսի տնտեսական և սօցիալական պատկեր ունէր կլասիք դարեշրջանը, որ տնտեսական զարգացման տեսակետից մնաք անուանեցինք տնային փակ տնտեսութեան շրջան։ Սարկատէր տան այդ տնտեսական աւտօնօմիայից բացատրում է հին Հռովմի զբեթէ ամբողջ սօցիալական ու քաղաքական պատմութիւնը։ Այստեղ սօցիալական չունէին արդիւնաբեր կոչումաւոր գասագոյութիւն չունէին արդիւնաբեր, արհեստաւորներ—միմիանց կարգեր, երկրագործներ, արհեստաւորներ—միմիանց հանդէպ և միմիանց կողքին, որպէս ինքնուրոյն սօցիալական խաւեր։ Կային միայն հարուստներ և աղքատալական խաւեր։ Եթէ հարուստը դուրս էր մղում աղքատին հողաներ։ Եթէ հարուստը դուրս էր մղում աղքատին ուղանուրութիւնից, ապա զբանով գալճնում էր յին տիրապետութիւնից, ապա զբանով գալճնում էր նրան պրօկտար։ Իսկ հողագործկը գուրկէ և վաստակելու հարաւորութիւնից, որովհետև այն ժամանակ կելու հասարաւորութիւնից, որովհետև այն ժամանակ զկար արդիւնաբերական կապիտալ, որ վարձով գնէր աշխատանքը։ տան փակ սահմաններից դուրս գոյութիւն չունէր ինդուստրիա։ Այդպէս առաջանում է այն խոշոր կալուածատիրութիւնն ու անթիւ ստրուկների շարանը, որոնք կինարօնացել էին սակաւաթիւ ձեռքերի մէջ։ Տէրեր և ստրուկներ — այդ գասակարգերն էին կազմում կլասիք դարեշրջանի հասարակական կազմի հակադիր ընկենները։ «Հարուստների և աղքատների, հակադիր ստրուկների խոշոր տարբերութեամբ—ապատների և ստրուկների խոշոր տարբերութեամբ—ասում է էնգելսը—հասարակական կազմը բաժանւում էր երկու անհաջող գասակարգերի»<sup>1)</sup>։

Սարուկ գասակարգը, բանուրն (Banausos) էր աշխատանքի, տնտեսական կեանքի բարգաւաճման զեկավարն ու դրօշակակիրը։ Ամենայետին, կեղտոտ զբաղվարն ու պարագաներից սկսած մինչև զերին կատարելագործուած

և այսօր ամենաազնիւ գործերի շարքն անցած արուեստը, իբրև արտօնեալ քաղաքացուց արհամարհուած ձեռնարկութիւն, վարուժ էին ստրուկները։ Ազատ քաղաքացին աշխատանքի արտադրութւնից լիանում, նրանով հիանում և իր կեանքի պահանջներին առատ բաւարարութիւն էր տալիս, իսկ նոյն աշխատանքի գաղափարը նա առուժ, ոտնահարում էր, իբրև ստորին զբաղմունք։ «Բանուրը բոլորովին զրկուած էր աղատամանակից—ասում է Պլատոնը—ձեւք բերելու անհրաժեշտ կրթութիւնն ու զարգացումը, նա զատապարտուած էր աշխատանքի և բարձրին ձգտելու ոյժ չունէր, նրանք ստրուկներ են և չգիտեն թէ ո՞րն է գեղեցիկի, լաւ և արդար»։ Իսկ ճարտարան Դեմոսթենեսը բացայատ շեշտում է՝ «բանուրից, որ միայն ստորինն է զեկավարում, անկարելի է որևէ մեծահոգութիւն սպասել»։ Արիտոտելը խօսելով ձեռնարհեստների և արուեստագործների մասին, աւելացնում է. «Արտօնեալ քաղաքացին չի կարող ձեռնարհեստով զբաղուել, որովհետև դա նրա հոգին ու մարմինը կը կոշտացնէ»։ Լուկիանոսը կբանութ շեշտերով արտայայտում է ժամանակակից նախատական վերաբերմունքն ու տեսակէտը արուեստագէտների նկատմամբ։ «Որպէս քանդակագործ, զու մի հասարակ ձեռնարհեստաւոր ես, ամենաստորին նշանակութեամբ ուրիշ ոչինչ, եթէ նոյնինկ Ֆիդիասի կը կը վառուէ քո մէջ»։ Իսկ Անտիթենեսը ասում է իսմէնիայի մասին, «ան ստորին ծագումից է, ապա թէ ոչ այնպէս գեղեցիկ սրինգ չէր նուագիլ»։ Այս բոլոր վկայութիւնները կենգանի պացոյցներ են, համոզուելու համար, թէ այն ժամանակ որ սատիճան ընկած էր աշխատանքը իր վարիչներով հանդերձ։ Հռովմում ստրուկ գասակարգը աւելի էր նախատուած,

1) Ibid. Էք. 170.

արհամարհուած, ենթակայ սոսկալի պատիժների և  
մահառիթ տանջանքների, որոնց մանրամասն ցուցակը  
թւում է Սենեկան, քան Յունաստանում: Եւ Հոռվում  
ստրկատէրը աւելի անսանձ դեսպօտ էր, աւելի էր  
չարշարում և որպէս հասարակ իր վաճառքի հանում,  
քան Յունաստանում: Կատօն երէցի համար տուում են,  
որ նա ահագին քանակութեամբ ստրուկներ էր վա-  
ճառքի հանում:

Այսպէս ահա, անտիկ աշխարհի տնտեսական ա-  
ռանձնայատուկ պայմանները անհրաժեշտօրէն առաջ են  
կրչել սօցիալակտն կեանքի առանձնայատուկ ստրուկ-  
տուրա, տոն տուել զառակարգային սպեցիֆիկ յարա-  
բերութիւնների: Մար ու ձորի անջրպետով բաժանու-  
ած երկու գասակարգեր, երկու ծայրայեղ հակադիր  
բևեռներ. մէկը՝ աղքատ, ստրուկ, սոսկալի զրկանքների  
ենթակայ, բայց միևնոյն ժամանակ քրտնաթոր ար-  
տազրող, աշխատանքի լուծը իր վրայ կրող, հարստու-  
թիւններ դիզող—զրանք ստրուկ բանուորներն էին:  
Միւսը՝ երջանկութեան կատարին հասած՝ վայելող  
փառաւորուող, զուարձութեան և խրախճանքի գիրկը  
մատնուած պարագաներ—զրանք ստրկատէրերը, հա-  
րուոտներն էին: Աշխատանք և զատարկապորտու-  
թիւն, քրտնաթոր արտադրութիւն և յդփացում—սը-  
րանք այնպիսի անհաջա, ոխերիմ կօնտրաստներ էին,  
որ տեսական կեանք ունենալ չէին կարող. սրանք այն-  
պիսի հակընդէմ մօմենտներ են մարդկային յառաջա-  
դէմ կեանքի, երբ սօցիալական-քաղաքական հարցերը  
եփուելու, եռալու վիճակ են ընդունում:

Իօմանական և գերմանական ցեղերի տնտեսու-  
թիւնը՝ միջին դարերի սկզբներում, ունէր զրեթէ ար-  
նային փակ տնտեսութեան նոյն հիմնական գծերը:  
Այնտեղ ևս տնտեսական յառաջադիմութեան կարիքը  
առաջնորդում է զէպի տնային փակ տնտեսութեան  
լայն կազմաւորումը: Այնտեղ տնտեսական ամենաուշագ-  
րաւ երկոյթը կազմում էր այն արքունական խոշոր  
տնտեսութիւնը, որը սփռում էր թագաւորի, ապա  
ազնուականի և եկեղեցու ընդարձակ կալուածների վը-  
րաց: Ստրկական տնտեսութեան օրգանական զարգացու-  
մով առաջանում է նորական տնտեսութիւնը (Fronhofswir-  
tschaft): Այդ երկու տնտեսական ինստիտուցիաները մի  
շատ կարևոր էիտի մէջ տարբերում էին իրարից: Հը-  
սովմում խոշոր կալուածատէրը կլանում էր փոքրին,  
դարձնում նրան հողագուրկ և այդպիսով գիւղացուն  
փոխարինում էր ստրուկը. ստրկական տնտեսութիւնը  
կատարում էր գիւղական դասակարգի կատարեալ  
պրոլետարացման գնուվ: Իսկ ձորտային տնտեսութեան  
մէջ, իրաւ, թէև մանր հողատէրը կախման վիճակի  
մէջ էր գտնուում ֆէօդալից, այնուամենայնի դուրս չէր  
մղում իր հողից: ստրկի համեմատութեամբ ձորտը ու-  
նէր փոքր ինչ աձնական և տնտեսական ինքնուրոյ-  
նութիւն: Ո՞րաեղից առաջացաւ այդ երկոյթը: Զին ի-  
տալիայում մանր գիւղացին կործանուում, ընկնում էր  
ստրկութեան գիրկը, որովհետեւ նա չէր կարողանում  
տանել ծանր տուրքերը: Սովոր մղում էր նրան զէպի  
թշուառութիւնն ու անկումը, մինչդեռ բօմանական-  
գերմանական միջին զարերում գիւղացին ու նրա հո-

զը գտնւում էին խոշոր կալուածատիրոջ հովանաւութեան տակ, կարիքի դէպքերում վերջինս պաշտպանում էր ճորտերին:

Այստեղ հանդիպում ենք արդէն տնտեսական առանձնայատուկ երևոյթների: Մինչեռ կլասիք դարեցրջանում մարդկանց խոշոր մասսա, որպէս սովորական իր կամ ապրանք սեփականութիւն էր կազմում փոքրաթիւ արխտօկրատների ձեռքին՝ հետեապէս տընային տնտեսութիւնը լիամփոփ էր և միուրոյն, բօմանական-գերմանական շրջանում աշխատող ու վայելող տարրերը—ճորտն ու ֆէօդալը—փոքրինչ անջատուած էին միմեանցից: Սակայն դրանով չեն խախտում տնային փակ տնտեսութեան սիստեմի հիմնական գըծերը, այլ աւելի է ընդլայնում նրա շրջանակը: Ճորտային տնտեսութեան բոլոր բարիքները կենտրօնանում էին խոշոր կալուածատիրոջ ձեռքում: Այստեղ ևս բացակայում են՝ աշխատանքի վարձը, գինը, կապիտալի շահը (պրօֆիտ), հետեապէս չը կան նաև՝ ձեռնարկող կապիտալիստ և վարձու բանուոր:

Տնային փակ տնտեսութեան սկզբնական ժամանակներում բոլորովին անձանօթ երևոյթ էր փոխանակութիւնը: Հնագարեան ընտանիքը ոչ միայն տնտեսասական անհրաժեշտութիւն չէր զգում արդինքները փոխանակելու, —որովհետեւ նրա սահմանափակ կարիքները հոգացում էին սեփական ջանքերով, — այլև նա ունէր մի առանձին հակակրական ինստինկտ դէպի փոխանակութիւնը: Էին հասկացողութեամբ փոխանա-

կել և խաբուել (Tauschen und Täuschen) գրեթէ միենոյն իմաստն ունէին:

Սակայն չնորհիւ այն հանգամանքի, որ բոլոր երկրամասերում բնական բերքերը գոյութիւն չունեն նոյն առատութեամբ, որ բոլոր ցեղերի մէջ տեխնիկան չէ զարգանում նոյն արագութեամբ, հետեապէս չէ արտադրում հաւասար քանակով արդիւնքներ, որ հետըգհետէ բազմանում և բարդանում են կարիքները, մինչեռ ընտանիքի վաստակաւոր ձեռքերը չեն կարողանում այդ բոլորին գոհացում տալ, — շնոհիւ այդ հանգամանքի, ասում ենք, աստիճանաբար երեան է գալիս և զարգանում ցեղերի մէջ տնտեսական փոխանակութիւնն ու յարաբերութիւնը: Շատ պարզ է եղել փոխանակութեան պրիմիտիւ աստիճանը: Դա աւելի ճիշտ փոխ տալ է եղել քան փոխանակութիւն: Օրինակ՝ եթէ մի գիւղացի վատ հունձ էր ունենում, վերցընում էր իր հարեանից որոշ քանակութեամբ հացահատիկ ու գարման, յաջորդ տարին վերադարձնելու պայմանով: Եթէ մէկի լծկան կինզանին ժանտախտի զրհ էր գնում, ուրիշները տալիս էին նրան որոշ ժամանակով իրանց եղը, իմանալով, որ իրենք ևս նոյն վիճակի մէջ կը ստանան նոյն կարգի օգնութիւն և այն:

Ժամանակի ընթացքում երեան են գալիս իսկական փոխանակութեան սիլվաստիները զուտ բնական իրենի տնտեսութեան (Naturalwirtschaft) ցըանում: Օրինակ փոխանակում էին՝ հացահատիկը զինու հետ, ձին՝ ցորենի հետ, մի կաոր կտաւ որոշ քանակով աղի հետ և այլն: Եթեմ նաև ստրկատէրը որոշ ժամանակով տալիս է ստրուկը մի ուրիշին աշխատելու և զրա փոխարէն ստանում է զինի, փայտ կամ այլ իրեր: Հետըգհետէ հրապարակ է գալիս իրերի մի հանրարժէք

**մասշտաբ՝** փողը, վաճառանոցները, կրեդիտային հաստատութեան սկզբնական սաղմային ձևերը: Դեռ այդ շրջանում փողը ստանում է մի քանի փունկցիաներ, այն է որպէս փոխանակութեան միջոց, արժեքի չափ, վճարման միջոց և արժեքի պահպանութեան (գանձելու, Wertaufbewahrung) միջոց, մանաւանդ ազնիւ մետաղից: Սկզբներում փողի փոխառութիւնը սերտ կապուած չէր շահաւէտութեան գաղափարի հետ: Ինչպէս յայտնի է յունական և հռովմէտական պատմութիւնից, անբնական էր համարում, երբ տուած փողի համար տոկոս էր պահանջում, որովհետեւ դա կործանում էր պարտապանին: Այդ պատճառով միջին դարերում կանոնական արգելվ՝ տոկոս վերցնելու դէմ, ծագեց ոչ թէ բարոյ-կական-աստուածաբանական մղումներից, այլ զուտ տնտեսական անհրաժեշտութիւնից:

Տնտեսական զարգացման առաջին փաղի մէջ համեգէս չին զալիս առևտորի բոլոր փունկցիաները: Ամենակինսական պիտոյըները զես ենթակայ չէին կանոնաւոր և մետական փոխանակութեան: Միայն հապուագիւտ բնական բերքեր և արհեստային արտադրութիւններն էին, որոնք առևտորի նիւթ էին կազմում: Պրօֆեսոր Լամպերիալը իր միջին զարերի տնտեսական հետազոտութիւնների մէջ ասում է, որ ֆրանսիացիք 11-րդ դարում միայն հազուագիւտ կարիքների դէպքերումն էին զնում ու վաճառում: <sup>1)</sup> «Առաջին սկզբնական երեսոյթը—ասում է Բիւլիերը—չէ խախտում տնային փակ տնտեսութեան հիմնական բնոյթը, որովհետեւ նա շօշափում է զեռ ևս տնտեսութեան սիստեմի մակերեսոյթային մասը»: <sup>2)</sup>

1) Lamprecht, «Eranzösisches Wirtschaftsleben եր. 132

2) Bücher, «Die Entstehung der Volkswirtschaft» եր. 129

### III

#### Քաղաքային տնտեսութիւն

Քաղաքային տնտեսութեան բնոյթը:—Միջնադարեան քաղաքը:—Քաղաքային աւտօնում տնտեսութիւնը: Քաղաքի և գիւղի տնտեսական յարաբերութիւնը:—Արգիւնաբերութեան պրօցեսի բաժնումը:—Վաճառանոցային հաստատութիւնը՝ իր տեղական բընարութեամբ:—Նստակեաց առևտուրը:—Մանր և մեծ առևտուրը:—Վաճառականի և վաշխառուի կապիտալը:—Ֆէօդալ վաճառական, վաշխառու՝ մի կողմից, և արհեստաւոր քաղաքացի ու ճորտ գիւղացի միւս կողմից:

### 1

Տնտեսական զարգացման յաջորդ փաղը անուանեցինք բաղակային տնտեսութիւն: Այդ փաղը մօտաւորապէս սկսում է, ըստ Շմօլերի, 10-րդ դարու վերջերից և տեսում մինչև վերածնութեան մուտքը, ըստ գրկելով միջին և արևմտեան Եւրոպայի տռաջնակարգ երկների տնտեսական կեանքը: Այն բնորոշ երևոյթը, որի շնորհիւ Եւրոպական ազգերի միջնադարեան տրնտեսութիւնը քաղաքային է կոչում, համարում է ամենից առաջ բաղակային կեանքի կատարեալ տիրախետրինը գլուխանի վրայ, մանաւանգ Խտալիայում: Միջնադարեան քաղաքը մի աւտօնում կենտրոնավայր էր այն բոլոր տնտեսական շարժումների և յարաբերութիւնների համար, որոնք տեղի էին ունենում նրա

մասշտաբ՝ փողը, վաճառանոցները, կրեդիտային հաստատութեան սկզբնական սաղմային ձևերը։ Դեռ այդ շրջանում փողը ստանում է մի քանի ֆունկցիաներ, այն է՝ որպէս փոխանակութեան միջոց, արժեքի չափ, վճարման միջոց և արժեքի պահպանութեան (գանձելու, Wertaufbewahrung) միջոց, մանաւանդ ազնիւ մետաղից։ Սկզբներում փողի փոխառութիւնը սերտ կապուած չէր շահաւէտութեան գաղափարի հետ։ Ինչպէս յայտնի է յունական և հոռվմէական պատմութիւնից, անբնական էր համարում, երբ տուած փողի համար տոկոս էր պահանջում, որովճետե գա կործանում էր պարտապահնին։ Այդ պատճառով միջին գարերում կանոնական արգելվ՝ տոկոս վերցնելու դէմ, ծագեց ոչ թէ բարոյեական-աստուածաբանական մղութիւններից, այլ դուռ տնտեսական անհրաժեշտութիւնից։

Տնտեսական գարգացման առաջին փաղի մէջ հանդէս չեն գալիս առևտրի բոլոր ֆունկցիաները։ Ամենակինասական պիտոյքները դեռ հնդակայ չէին կանոնաւոր և մեծական փոխանակութեան։ Միայն հազուագիւտ բնական բերքեր և արհեստային արտադրութիւններն էին, որոնք առևտրի նիւթ էին կազմում։ Պրօֆեսոր Լամպլեխալը իր միջին գարերի տնտեսական հետազոտութիւնների մէջ ասում է, որ Քրանսիացիք 11-րդ դարում միայն հազուագիւտ կարիքների գէպերումն էին զնում ու վաճառում։<sup>1)</sup> «Առաջին սկզբնական երեսոյթը—ասում է Բիւխերը—չէ խախտում տնային փակ տնտեսութեան հիմնական բնոյթը, որովհետեւ նա շօշափում է դեռ ևս տնտեսութեան սիստեմի մակերեսոյթային մասը»։<sup>2)</sup>

<sup>1)</sup> Lamprecht, «Eranzösisches Wirtschaftsleben» եր. 132

<sup>2)</sup> Bücher, «Die Entstehung der Volkswirtschaft» եր. 129

### III

#### Քաղաքային տնտեսութիւն

Քաղաքային տնտեսութեան բնոյթը։—Միջնադարեան քաղաքը։—Քաղաքային աւտօնոմ տնտեսութիւնը։ Քաղաքի և գիւղի տնտեսական յարաբերութիւնը։—Սրդինաբերութեան պրօցեսի բաժանումը։—Վաճառանոցային հաստատութիւնը՝ իր տերական բընաւորութեամբ։—Նստակեաց առևտուրը։—Մանր և մեծ առևտուրը։—Վաճառականի և վաշխառուի կազմակալը։—Ֆէօդալ վաճառական, վաշխառու մի կողմից, և արհեստաւոր քաղաքացի ու ճորտ գիւղաբառու մի կողմից։

### 1

Տնտեսական գարգացման յաջորդ փաղը անուանեցինք բաղաբային տնտեսութիւն։ Այդ փաղը մօտառ-րապէս սկսում է, ըստ Շմօլերի, 10-րդ դարու վերջերից և տեսում մինչև վերաճնութեան մուտքը, ըսդգրկելով միջին և արևմտեան եւրոպայի առաջնակարգ երկրների տնտեսական կենաքը։ Այն բնորոշ երևոյթը, որի շնորհիւ եւրոպական ազգերի միջնադարեան տընտեսութիւնը քաղաքային է կոչում, համարում է ամենից առաջ բաղաբային կեանքի կատարեալ տիրապետութիւնը գլուխականի վրայ, մանաւանդ իտալիայում։ Միջնադարեան քաղաքը մի աւտօնոմ կենտրոնավայր էր այն բոլոր տնտեսական շարժումների և յարաբեկը այն բոլոր տնտեսական համար, որոնք տեղի էին ունենում նրա

մէջ և նրա շուրջը: Նա իր շրջապատ գիւղերով ներկայացնում էր մի տնտեսական ինքնամփոփ ամբողջութիւն, որի մէջ տնտեսական կեանքի ողջ շրջանառութիւնը ընթանում էր ինքնանկախ, ըստ սեփական նօրմաների: Իւրաքանչիւր քաղաքային տնտեսական միութիւն ունէր իր սեփական դրամը, չափն ու կշիռ:

Կեանքի այն հազորդակցութիւնը, որ գոյութիւն ունէր քաղաքի և իր շրջակայ գիւղերի մէջ, տեղի չէր ունենում մէկ կամ միւս քաղաքի մէջ: Վաճառանոցային իրաւունքը կարգաւորող քաղաքային մագիստրատը արգելում էր իրերի արտահանութիւնը դէպի որևէ այլ քաղաք. այդ կատարում էր միայն այն ժամանակ, երբ տեղական բնակիչները լի չափերով բաւարարութիւն են տալիս իրանց կարիքներին և իրերի յաւելումը կուտակուած է մնում շուկայում: Կամ թէ չէ քաղաքային մագիստրատը թոյլ էր տալիս օտար քաղաքներից իրեր ներմուծելու միայն այն ժամանակ, երբ այդ իրերն արտադրող արհեստի ճիւղը բացակայում էր սեփական քաղաքում, կամ թէ կայ, բայց անբաւարար է տեղական պահանջների համար:

Այն բնորոշ կրիտերիումը, որ պարզ ցոյց է տալիս քաղաքային տնտեսութեան տարբերութիւնը նախկին ֆաղից, կազմում է վաճառորդների արդիւնաբերութիւն (Kundenproduktion), այսինքն արդիւնաբերութիւն ոչ թէ սեփական կարիքների համար, այլ անմիջական կամ ուղղակի փոխանակութեան համար: Տընտեսութեան այդ սիստեմը, որի սկզբնաւորութիւնը մենք տեսանք դեռ առաջին ֆաղի մէջ, քաղաքային տնտեսութեան մէջ ստանում էր տիպիքական արտայայտութիւնը: Որքան տնտեսական զարգացման ընթացքում առանձին կոչումների մէջ յառաջադիմում է

աշխատանքի բաժանումը և մասնաւոր սեփականութիւնը աճում է ծաւալով ու նշանակութեամբ, այնքան ընդհանութիւնը դանդաղում է ինքնագործածութեան համար եղած արդիւնաբերութիւնը և արագ զարգանում է փոխանակութիւնը: Ապրանքների փոխանակութիւնը միշտ նախադրում է երկու պայման. առաջին, որ տնտեսութեան բոլոր արդիւնաբերական ճիւղերը միենայնը չեն արտադրում, որովհետեւ հասարակութեան մէջ մուտք է դորձել աշխատանքի բաժանումը, և երկրորդ, որ փոխանակողները ազատ կարգաւորում են այն արդիւնքների վրայ, որոնց նրանք փոխանակում են:

Քաղաքային տնտեսութեան շրջանում արդիւնաբերութեան պրօցեսը անդամանատում և սօցիալական խաւերի է բաժանում ազգաքնակութեան նախկին միապաղապ կազմը իր տնտեսական ֆունկցիաներով: Հընագարեան ընտանիքը մի կողմից հաւաքում, կարգաւորում էր հողից ստացած բնական բերքերը, իսկ միւս կողմից կոռում կոփում էր իր պրիմիտիւ գործիքները: Երկրագործութիւնն ու արհեստը միմեանց հետ սերտ շաղկապուած էին: Միջնադարեան մարդը անկարող էր այլ ևս սեփական ջանքերով բաւարարութիւն տալ իր հետզնեաէ բարդացող պահանջներին. նա այլ ևս հընարաւորութիւն չունէր միաժամանակ հողագործ և արհեստաւոր լինելու. նա պէտք է կամ հողագործ և կամ արհեստաւոր լինէր, այդ էր պահանջում աշխատանիքի բաժանման բնական պրօցեսը: Այդպիսով տնտեսական զարգացման երկրորդ ֆաղի մէջ տնտեսութեան ամրող պրօցեսը բաժանում է երկու մասի, առաջ բերելով սօցիալական տարբեր խաւեր. մի տեղ հողացեր գլուղացին մշակում է հողը, հայթհայթում է հում սիւթեր, իսկ միւս տեղ արհեստաւոր բաղաբացին հում

Նիւթերից արտադրում է գործածական կարևոր առարկաներ:

Արդիւնաբերութեան պլրօցեսի այդ բաժանումը տեսական և հաստատուն գոյութեան նեցուկներ շնորհեց վաճառանուցային հաստատութեան: Վաճառանոցը (Markt) համարում է բազմաթիվ գնողների եւ վաճառողների, սպառողների եւ արտահնողների համախմբում՝ որուն տեղերում եւ որու ժամանակին: Կենսական անրհաժեշտութիւն էր զգացում, որ սօցիալական կոչումաւոր խաւերը ժողովուէին մի ընդհանուր տեղ և փոխանակէին իրանց արտադրած իրերը: Միջնադարեան վաճառանոցը ունէր սովորաբար տեղական բնաւորութիւն: Քաղաքը (Եկեղեցու մօտ, լայն հրապարակի վրայ, քաղաքի գարպասի առաջ և այլն) կամ նրա մօտ շրջապատն էր կաղմում արդիւնաբերողների և սպառողների համախմբման տեղը: Նրանք անմիջական յարաբերութիւն, շփում ունինք միմեանց հետ իւրաքանչիւրը տէր էր իր ապրանքին և պատասխանատու իրար հանդէպ: Գիւղացին քաղաք է բերում իր երկրագործական բերքերի յաւելումը՝ կենսական պիտոյքներ թէ հում նիւթեր, վաճառում տեղական բնակիչների վրայ և գնում արհեստաւորից ինդուստրիական արդիւնքներ: Քաղաքացին ու գիւղացին ունէին վաճառորդացին յարաբերութիւն: Սովորաբար ինչ որ մէկը արտադրում էր, գրան կարիք ունէր միւսը և ընդհակառակը: Փոխանակութեան ակտը շատ յաճախ կատարւում էր առանց փողային միջոցների կամ թէ չէ փողը գործ էր ածւում միայն իրերի արժեքների հաւասարացման համար: Վաճառանոցային յարաբերութեան, որպէս մշտական երեսյթի, սկզբնական շրջանում, երբ արտադրող ու սպառող անմիջապէս հանդիպում էին իրար, ամենին կարիք չէր զը-

գացուում միջնորդ պերօնալ-առևտրական դասի: Վաճառականութիւնը, որպէս տնտեսական մասսայական երեսյթ, և վաճառականները, որպէս մի սօցիալական կոչումաւոր խաւ, հանդէս են եկել աւելի ուշ, բան վաճառանոցը: Արտադրողների և սպառողների վաճառանոցային անմիջական յարաբերութիւնը, փոխանակութիւնը ըստինքեան բացասում է միջնորդ պերօնալի գոյութիւնը:

2

Տնտեսակտն պահանջների բարզացումը և աշխատանքի բաժանման զարգացումը հետզհետէ համնում են այն աստիճանին, որ գնելն ու վաճառելլ ևս դառնում է մի առանձին գործ, որին նույիրում է մի հասարակական խաւ: Հետզհետէ արժատ է բռնում միջնադարեան քաղաքներում նաև ակտաց առեւտուրը, սկզբում ի հարկէ փոքր ծաւալով: Միայն ունեոր բնակիչներն էին, որոնք կարողանում էին ուրաքանիան և տարեկան վաճառանոցում (Wochen und-Jahrmarkt) ոչ միայն անմիջապէս հոգալ իրենց հարկադրող կարիքները, այլ և իրանց ապահովել կենսական միջոցներով մինչև յաջորդ վաճառանոցը: Ազգաբնակութեան աղքատ խաւերը, սակայն, չէին կարողանում երկար ժամանակով իրանց ապահովել: Ուստի կարիք կար իրերի մի մըշտական պաշարի, որից նրանք մաս-մաս զնէին և բաւարութիւն տային իրանց ընլացիք պահանջներին: Այդ պաշարը պահելու, խնամնուու և մաս-մաս վաճառելու կոչումը ստանձնեց ինքը՝ մասն ուեւտրակնանիր: Խուռու կոչումը ստանձնեց ինքը՝ մասն ուեւտրակնանիր, որպէս հաստատաբնակ, նստակեաց կոչում գոյութիւն չունէր մինչև մի-

Հին դարերի վերջերը: Դա բացառապէս թափառական, տօնավաճառի առևտուր էր: Մեծ առևտուրը հոգում էր միայն հազուագիւտ ապրանքների ներմուծումն ու արտահանումը, որոնք ամենուրեք չէին արդիւնաբերում: Օլիխակ մեծ առևտրականը հոգում էր հետեւել իրերի առևտուրը, 1. Հարաւային երկրներից մրգելէններ, քաղցր ու անուշանոտ իրեր: 2. Չորացած և աղով արած ձուկ, որ այն ժամանակ ժողովրդական ընդհանուր մնունդի նիւթ էր համարում: 3. Մորթի, կաշի: 4. աղնիւ տեսակ մահուղեղին: 5. Գինի, մանաւանդ գերմանական-հիւսիսային քաղաքների համար:

Հետզիետէ ծլող-ծաղկող վաճառականի, առևտրական ձեռնարկութեան և առևտրական կապիտալի կողքին երեան է գալիս վաճիսառուն և վաճիսառուի կապիտալ (Wucherkapital), բուրժուական վայելուչ արտայացառութեամբ՝ փոխառութեան կապիտալ (Leihkapital): Առևտրական կապիտալը գրեթէ նոյնքան հին է, որքան և վաշխառուի կապիտալը: Երկուսն էլ կազմում են կապիտալի հին ձևերը, երկուսն էլ համարում են ապագայ տնտեսութեան կապիտալիստական զարգացման անհրաժեշտ նախապայմանները: Քաղաքային տընտեսութեան շրջանում դոյութիւն ունէին միայն կապիտալի այդ երկու տեսակը. ինդուստրիական կապիտալը գեռ բացակայում էր:

Ո՞րտեղից են քաղում իրանց եկամուտը այդ անարդիւսիւս սօցիալական խաւերը — առևտրականն ու վաշխառուն: Ի՞նչ աղբիւրից է շահում, աճում և լճանում նրանց կապիտալը:

Եթէ վաճառականը ուղում է գնած ապրանքը վաճառելու ժամանակ մի օգուտ կամ շահ ունենալ, ապա նա կարող է այդ անել սովորաբար այն ժամանակ,

երբ նա իր ապրանքը գնէ մի այնպիսի ժամանակ, ուր նա արժան է և վաճառ է մի այնպիսի տեղ կամ այնպիսի ժամանակ, ուր նա թանդ է: Այսինքն գնել արժան և վաճառել թանդ, և իրացնել այդ տարբեր պրօցեսի ժամանակ վաստակած օգուտը: Մինչդեռ հողագործ գիւղացու և ձեռնարկեստաւոր բաղաքացու եկամուտը կախւած է ամենից առաջ իր կամ իր ընտարքի անձնաւորութիւնից, աշխատասիրութիւնից և ձարպիկութիւնից, վաճառականի շահի բանակը, ընդհակառակը, այնքան աւելի մեծ է, որքան նա աւելի շատ գրամ ունի ապրանք գնելու և վաճառքի հանելու համար:

Որակով նմանօրինակ աղբիւր ունի և անարդիւնաւէտ վաշխառու կապիտալիստը: Վաշխառուի կապիտալը ըստինքեան նախադրում և չաւորութեան գոյութիւնը: Ով ունի այն, ինչի նա կարիք ունի, պարզ է, որ որևէ բան մէկից փոխ չի վերցնի: Վաշխառուի կապիտալը մի միջոց, է, որ շահագործելով կարուտեաների չքաւոր վիճակը, բազմացնում է նրանց թիւը, վաշխառուն քամում, մզում է իր պարտապանին, իսկ նրանկման մէջ չունի նա որևէ ինտերես:

Ուրեմն յանձինս վաճառականի և վաշխառուի, գտնում ենք քաղաքային տնտեսութեան շրջանում երկու սօցիալական խաւեր, որոնք ոչ մի նոր արժէք չեն աւելացնում արտադրած ապրանքի վրայ, և որոնք, այնուամենայնիւ, շնորհիւ ընդհանուր տնտեսական պայմանների դաստարութեան և տնտեսական ֆակտորների զարգացման աղղեցութեան — մասնաւոր սեփականութեան սիստեմի ներփոյ-առաջացել և անընդհատ աճում են: Մէկը՝ վաճառականը, որոնում է գնելու ոյժու միջոցներ ունեցող հասարակութիւն, ասել է շատ ու

ուուս սպասող, եթէ ուզում էք՝ ուայլող նասարակուրիւն,  
որպէսզի առևտրական նուաճութիւնը յաջող ընթանան,  
իսկ միւսը՝ վաշխառուն, որոնում է փողի ծարաւ, կա-  
րօսով հասարակուրիւն, որպէս զի լաւ ու արագ ոլանայ  
անգութ շահագործութեան պրօցեսը:

Սակայն տնտեսական գարգացման երկրորդ ֆազի  
ամբողջ ընթացքում—սկսած առաջին ֆազի վերջին ըր-  
ջանից—մենք հանդիպում ենք մի այլ դասակարգի, որ ոչ  
միայն տնտեսական կուտակուած բարիքներ է անաշխատ  
վայելում, այլ և տիրապետող դիրք ունի հասարակա-  
կան և քաղաքական կեանքում: Դա խստապարանոց,  
պարագիտ ֆէօդալներն են (այստեղ առիթ չունենք  
կղերականութեան մասին խօսելու, որովհետեւ մենք  
գործ ունենք միայն այն խաւերի հետ, որոնք անմիջա-  
պէս թէ միջնորդապէս շախկապուած են արդիւացե-  
րութեան պրօցեսի և տնտեսական ձևերի հետ): Միջ-  
նագարեան քաղաքային տնտեսութիւնը ուրիշ խօսքով  
կոչում է ֆեոդալական տնտեսութիւն: այսինքն միջնա-  
դարեան տնտեսութիւն տիրապետոյ ձեւը եղել է ազրի-  
կուլուրային, որի ժերն ու տիրականը, արդիւնքներ վա-  
յելուր եղել է ֆեոդալը:

Բայց միջնագարեան տնտեսութիւնը ունի և գրա-  
հակառակ, սակայն դրանով պայմանաւորուած անուն,  
այն է՝ նորտային տնտեսութիւն: Դա կը նշանակէ, որ  
միջնադարեան արդիւնքեր, վաստակող հասարակուրան  
մեծագոյն մասը (գիւղացիութիւնը) ունեցել է իր տնտե-  
սական ֆունկցիաների մեջ նորտային յարաբերութիւն դէ-  
պի խուռ կալուածաւերը՝ ֆեոդալը: Ֆեոդալիզմը այն-  
պէս է պայմանաւորուած նորտային տնտեսութեամբ, ինչ-  
պէս կլասիկ դարեւրջանի ազատ ու անաժամա արիսու-  
րատիւն՝ սրբական տնտեսութեամբ կամ արդի կապիտա-

լիսական տնտեսութեան սիստեմ՝ պրօլետարիատի գոյու-  
թեամբ:

Հէնց այդ ճորտային տնտեսութեան մէջ էին  
խարսխուած ֆէօդալական եկամտի անբաւ հարստու-  
թեան արմատները. հարստութիւն՝ բնական բերքերից  
և բարիքներից (Naturalgüter), եկամուտ՝ փողային ծա-  
նըր տուրքերից, որ այնքան զարհուրելի էքսպրոպրի-  
ացիայի (անսեփականացում) ենթարկեց արևմտեան եւ-  
րօպայի գիւղացիութեան: Ճորտի քաղծածութիւնը՝ ֆէօ-  
դալի շայլութեան ու յղիացումն էր, ճորտի չքաւորու-  
թիւնը՝ ֆէօդալի չաղ եկամուտն էր, նրա հարստութեան  
գիգումը:

Ճորտացած գիւղացիների համեմատութեամբ, քա-  
ղաքացի արհեստաւորներն ունեին տնտեսական անկա-  
խութիւն և սօցիալական աւելի բարւոք վիճակ: Ար-  
հեստաւոր գասակարգը ցածր խաւերից բաղկացած մի  
շերտ էր, որ սկզբում ֆափագում էր տիրանալ այն ա-  
զատութեան և հաւասարազօր իրաւունքներին, որ վա-  
յելում էին ազնուականներն ու պատրիկները: Սակայն  
խափանուեցին նրանց երազած ձգտութները և նրանք  
մնացին գուտ արհեստաւորներ: Նրանք ունեին իրանց  
ընդհանուր համբարական կազմակերպութիւնը (Zunft,  
վեհ) բաղկացած վարպետներից, բարգարներից (Gesell-  
le) և շակերտներից: Վարպետները համեմատարար քիչ  
էին և վայելում էին աւագի դիրք: Քարգարերի աշ-  
խատանքի վարձաւրութիւնը արւում է արդէն նօրմայի  
տակ: Քաղաքային արհեստաւոր գասակարգը վիճակա-  
կից է նողագործ գիւղացիութեան հետ այն տեսակէ-  
տից, որ երկուսն էլ արդիւնաբերող տաբըրեր են. մէկը  
արհեստային ինդուստրիայի մէջ, միւսը՝ գիւղատնտե-  
սութեան մէջ: Երկուսի եկամուտը, աղբաւստի միջոց-

Ները վաստակում են սեփական քրտինքով։ Եւ վերջապէս, որ երկուսն էլ շահագործուող տարրեր են (թէնոչ հաւասար չափով)։ Մի կողմից քրտնավաստակ գիւղացին վերջին ծայր հարստահարում, քամում, մըզւում էր տղորով ֆէօդալից, իսկ միւս կողմից քաղաքցի արհեստաւորը ճնշւում էր քաղաքներում կուտակուող առևտուրական և վաշխառուի կապիտալի ծանրութեան տակ։

Այսպէս, ֆէօդալը, վաճառականը, վաշխառուն մի կողմից, որպէս արդիւնքներ վայելող դաստակարգեր, և արհեստաւոր ու գիւղացի միւս կողմից, որպէս քրտնավաստակ արդիւնարեր դաստակարգեր։ Միջնադարեան տնտեսութիւնը ունէր սօցիալական խաւերի այդ կօմբինացիան, երբ նա դիմաւորեց նոր դարու վերածնութեան արշալոյսին։

IV

### Ժողովրդական տնտեսութիւն

Ընդհանուր կուտուրական վերածնութիւն։ — Քաղաքական-պետական կենտրոնացումը՝ արդիւնք տնտեսական պահանջների և հասարակական ձգուումների։ — Տողովը գալական տնտեսութիւնը և նրա առանձնայատուկ կողմերը։ — Իրերի շրջանառութեան պրօցեսը երրող ֆազում։ — Արդիւնարերողի և սպասողի յարաբերութիւնը։ — Առևտուրը որպէս մասսայական երեխյթ։ — Տեխնիքական յեղաշըրջումները։ — Անդրծովեան-գաղութեային քաղաքականութիւնը։ — Խաղորդակցութեան միջոցների կատարելագործումը։ — Ինդուստրիական կապիտալի սկզբնական ակումբութացիւն։ — Ինդուստրիական, առևտուրական և վաշխառուի կապիտալի փոխազդեցուական, առևտուրական և վաշխառուի կապիտալը միջին և նոր զարերում։ — Կրեթիւնը։ — Վաշխառուի կապիտալի միջին և նոր զարերում։ — Կրեթիւնը։ — Բիւրօկրատուների և ռազմիկների կենարոնական պետութիւնը նոր զարերում։ — Պետութեան և կապիտալիստ դաստակարգի փոխարքած կախումը։ — Դասակարգային պետութիւնը։ — Պետութեան միջամտութիւնը տնտեսական կեանքի մէջ և նրա սըտանձնած տնտեսա փունկցիաները։ — Դասակարգային լայն գիֆերնցիացիան նոր ու նորազմն զարերում։ — Կապիտալիստաներ և պրօւտարներ։ — Խոշոր կալուածատէրեր և մանը գիւղացիութիւն։ — Կօնսերվատիզմն ու լիբերալիզմը։ — Միջին դաստակարգը՝ արհեստաւորները, մանը վաճառականները և ընդհանուր լինտելիցիան։ — Նոր սօցիալական օրգանիզմը։ — Տնտեսական-հասարակական չորս տարրեր հստանքները երրորդ ֆազում՝ մերկանտիլարսօլիտիզմի, տնտեսական լիբերալիզմի, սօցիալական և սօցիալիստական շարժումները։ — Տնտեսական զարգացման երեք ֆազերի ընդհանուր համեմատական կէտերը։

1.

Միջին դարերի քաղաքային շրջափակ տնտեսութիւնը արագ քայլերով ընդլայնում է իր եզրները նոր դարերի ընդհանուր կուտուրական վերածնութեան

մուտքով։ Հիմք է գրւում ինչպէս տնտեսական, նոյնպէս էլ տնտեսական ֆակտորներով պայմանաւորուած քաղաքական, հասարակական կեանքի մի նոր դարագլխի։ Յնցում, սթափւում են արևմտեան Եւրոպայի առաջնակարգ երկրները։ Հետզհետէ անհետ չքանալու ճանապարհ են որոնում միջնադարեանը, սիօլաստիկը, մարդկային միտքը կաշկանդող բնազանցական խորհրդածութիւները։ միջնադարեան տիսուր ու մութ փլատակների վրայ կանուցուել սկսեց մի նոր, թարմ՝ գեղատեսիլ աշխարհ։ Աշխարհագրական բացումները, տեխնիքական գիտական պօգիտիւ ուսումնասիրութիւնների յառաջագիմութիւնը, կրթական-դպրոցական հաստատութիւնների բարեկարգումը, կլասիք աշխարհի փարթամ քաղաքակրթութեան խորագննին վերլուծութիւնը և այլն, մի ակտիւ յեղացրջում են մըտցընում ոչ միայն պետական, հասարակական կազմակերպութեան մէջ, այլ և մեծապէս ազգսւմ են մարդանհատի մտաւոր հօրիզոնի և անձնական հակումների վրայ, փոխում են անհատի, սօցիալակտն խաւերի և դասակարգերի տնտեսական կեանքի ձեւն ու յարաբերութիւնները։ Փամանակի յայտնի ճանապարհորդները՝ Ալբրեխտ Դիրեկ և Դուկաս Կրանախ, խիստ գեղեցիկ ու գրաւիչ գոյներով են ներկայացնում, թէ ինչպէս քաղաքակրթութիւնը նորագիթիթ գարնան պէս ամենուրեք ծաղկում, բարգաւաճում էր։

Ցիր ու ցան, միմեանցից անջատուած միջնադարեան քաղաքները, որոնցից իւրաքանչիւրը ներկայացնում էր իրանից մի տնտեսական-քաղաքական աւտոնում ամբողջութիւն, խաղում են իրանց կզզի-ացումը տնտեսական ծաւալուող պահանջների ազգեցութեան ատկ և տեղի տալիս մեծ տերիտորիական ամե-

բողջութեան։ Արևմտեան Եւրօպայում երկրի միապետները անհրաժեշտ կոիւ են մղում, յաղթում և իրենց ստուադրում են իրանց տիրական ոյժը սահմանափակող այլ և այլ կազմակերպութիւններին—կղերականութեան, ազնուականութեան, ազատ քաղաքներին ու շրջաններին։ Դարու կենսական պահանջ էր համարւում նուաճել ու խաղաել այդ առանձնակի խոչնդուներին և զլուխ բերել նոր դարերի այգային-քաղաքական սերտ, կենտրոնաձիգ միութիւնը, պետական արօլիւտիզմը։ Հետզհետէ արմատանում է ընդհանուր պետական գաղափարը։ Միջնադարեան ինքնամփոփ քաղաքը՝ իր շրջապատ գիւղերով, գաղարում է այլ ևս գոյութիւն ունենալուց, որպէս մի մէկուսացած ամբողջութիւն։ Նա գառնում է մի օրգանական անդամը այն պետական կենտրոնացման, որ միացնում, օղակում էր իր մէջ քաղաքաթիւ քաղաքներ և մանր-մունը տերիտորիաներ։

Տնտեսական անհրաժեշտութեան ծնունդ էր այդ երկոյթը։ Մի կողմից քաղաքային ինքնամփոփ տնտեսութիւնը այլ ևս անզօր էր անթերի գոհացում տալու իր բնակիչների առաջընթաց կարիքներին։ Միւս կողմից գարգանում էր տեխնիկան, բարձրանում էր աշխատանքի արդիւնաւէտութեան (Процдуктивität) աստիճանը, բազմանում էր աշխատանքի բաժանումը ճիւղաւորում են արհեստները, տնտեսական-սօցիալական խաւերը, լայն դիմենզիօններով առաջ ընթացող առետուրը և գրամական բարեկարգուող սիստեմը մերձեցնում են իրար ընդարձակ տերիտորեաներ, միջնագարեան հասարակ ձեռնարկեատը և մանր արդիւնաբերութիւնը հետզհետէ տեղի են տալիս մանուֆակտորային, ապա մեծ ինդուստրիական—ապրանքային արդիւնաբերութեան։ Ահա տնտեսական պահանջների

այդ բարդ համագումարը բնական անհրաժեշտութեամբ առաջ բերաւ ընդհանուր ազգաբնակութեան և համապատասխան գասակարգերի ու խաւերի մէջ տնտեսական կենսական շահերի համաձայնութիւն, ոսցիալական ինտերեսների և ձգտումների համօրինակութիւն։ Իսկ այդ բոլոր համօրինակ շահերի և ձգտումների կենդանի արտայայտութիւնը եղաւ այն ժամանակ, երբ պետական ոյժը խաղաելով առանձնացած մարմինների կղզիացնող կապանքները, հնարաւորութիւն տուաւ հասարակական լայն համայնքութեան և հաւաքական աշխատակցութեան։ «Ֆէօղալական տնտեսութեան օրով—ասում կարլ կառցկին—քաղաքային համայնքները (շրջապատ գիւղերով) գրեթէ տնտեսապէս անկախ էին միմեանցից, որովհետև նրանք արդիւնաբերում էին համարեա ամեն բան, ինչի կարիք ունեին։ Դրանից հետեւում էր նաև նրանց քաղաքական ինքնուրութիւնը։ Ընդհակառակը, ապրանքային արդիւնաբերութիւնը և ապրանքային առևտուրը ազգի զանազան համայնքներին կախման վիճակի մէջ դրին մի կամ մի քանի տնտեսական կենտրօնավայրերից և այդպիսով նպաստեց տնտեսական կենտրօնացման քաղաքականը հետեւելու»<sup>1)</sup>։

Տնտեսական և դրանով պայմանաւորուած քաղաքական պետական կենտրօնացումով ծաւալուեցին տընտեսական ֆակտորներն ու ֆունկցիաները ժողովրդի քաղաքան խաւերում։ Տնտեսական այդ (երրորդ) փառը կոչւում է ժողովրդական տնտեսութիւն։ Այդ փառի մէջ արդէն տնտեսող մարմինը կազմում է ինքը՝ ժո-

զովուրդը, որպէս մի ուրոյն ամբողջութիւն, որի ծալքերում ցանցածե տարածուած են հազար ու մի փունկցիաներ։ Առաջին ֆազի կամ տնային փակ անտեսութեան մէջ տնտեսող մարմինը՝ տունը, բաւարարութիւն էր տալիս միայն տան անդամներին։ Երկորդ ֆազի կամ քաղաքային աւտօնոմ տնտեսութեան մէջ, քաղաքը իր շրջապատ գիւղերով բաւարարութիւն էին տալիս սահմանափակ թուով ընակիչների կարիքներին։ Մինչդեռերբորդֆազի կամ ժողովրդական տնտեսութեան մէջ տնտեսող սուրբիեկտը ներկայացնում է մի կօմպլեքս մարմին—ժողովուրդը, որի բարդ օրգանիզմը ընդգրըկում է իր մէջ ամբողջ ազգային-պետական տորիտորիան։

Ժողովրդական տնտեսութեան ամենախոշոր և աչքի զարնող տարբերութիւնը՝ տնտեսական զարգացման միւս ֆազերի հանդէպ, կազմում է այն երկութը, որ այդ ֆազի մէջ արդիւնաբերութիւնը ստանում է ապրանքային արդիւն ոլերու թեաև բնաւորութիւն, այսինքն արտադրող ապրանքները սկզբից և եթ որոշուած են փոխանակելու, վաճառելու, շուկայ արտահանելու համար։ Մասսայաբար արտադրուող ապրանքները վաճառքի են հանուում ժողովրդական մասսայի բազմապատիկ կարիքներին բաւարարութիւն տուլու համար։ Ժողովրդական տնտեսութեան շրջանում երկարում ու բարդանում է շրջանառութեան այն պրօցեսը, որ ունեն տնտեսական բարիքները՝ արդիւնաբերողի ձեռքից մինչև սպառողիձեռք համար։ Ապրանքը կտրում, անցնում է մի շարք տնտեսութիւնների բովից, նախքան իր վախճանական սպառման կամ գործածութեան համելը։ Տնային փակ տնտեսութեան շրջանում արդիւնաբերողն ու սպառողը ամփոփուած էին մի սուրբիեկտի

<sup>1)</sup> Karl Kautsky. «Die Klassengegensätze von 1789», եր. 9.

մէջ՝ ընտանեկան հարկի տակ: Քաղաքային տնտեսութեան մէջ թէսաշխատանքի բաժանումով տարբեր խաւեր են ներկայացնում արդիւնաբերողներն ու սպառողները, այնուամենայնիւ նրանց տնտեսական շփումն ու յարաբերութիւնը կատարում էր անմիջապէս, վաճառանոցում կանգնած էին նրանք իրար հանդէպ: Խոկ ժողովրդական տնտեսութեան մէջ իրար չեն ճանաչում և խիստ հեռանում են միմեանցից արդիւնաբերողներն ու սպառողները: Արդիւնաբերողը չէ, որ իր ապրանքը անմիջապէս վաճառում է սպառողի վրայ, և սպառողը չէ, որ զնում է այդ ապրանքը և փող տալիս արդիւնաբերողներին: Մի այլ սօցիալական խառ է—առեւտր կան դաս սկարզը—որ ստանձում է այդ միջնորդողի տնտեսական փունկցիան: Տնտեսական զարգացման երրորդ ֆազի մէջն է միայն, որ առևտուրը և նրա վարիչ դասակարգը համել են ֆենոմենալ զարգացման ու ծաւալման: «Վաճառականները ասում է էնդեմը—աշխատանքի բաժանման անհրաժեշտութեամբ առաջացած մի դասակարգ են, որոնք ոչ մի մասնակցութիւն չունեն իրերի արդիւնաբերութեան պրօցեսի հետ, ոչ մի արժէք չեն աւելացնում ապրանքի վրայ, այլ զբաղւում են լոկ արդիւնքների փոխանակաթեամբ և վաճառքով:»<sup>1)</sup> Առևտրական կենտրոնական քաղաքները քաղաքիրթ երկրների, ստացել են այսօր միջազգային բնաւորութիւն, Ամենակենսական պիտոյքներից պկած մինչև ամենաբարձր լուքուսի արդիւնքները դարձել են առևտուրի առարկայ: Այսօր առևտուրը դար-

ձել է մի տնտեսական—մասսայական երևոյթ առաջին կարգի:

2.

Նոր դարերի արջանում, սկսած 15-րդ դարի վերջերից—մանաւանդ 18 և 19-րդ դարերում—տնտեսական երևոյթների զարգացումը այնքան սրընթաց է, տեխնիքական յեղաշրջումները այնքան արագասահ ու բազմակողմանի, ժողովրդական սպահանջները այնքան բարդ ու յառաջապէմ, որ ազգային—տնտեսական քաղաքականութիւնը չէր կարող բաւականանալ միայն պետական տերիտորիայով, նա պէտք է արտասահմանեան շահատակութիւններ անէր: Իսպանիայի, Ֆօրտուգալիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Հօլանդիայի անդըրծովեան—գաղութային առևտրական նուաճումները տալիս են մեզ ազգային—տնտեսական քաղաքականութեան տիպիքական օրինակներ: Հաղորդակցութեան հետզհետէ կատարելագործող միջոցները, մանաւանդ նաւազնացութիւնը, ընդարձակ տոն ու ծաւալ տուին առևտուրին հեռաւոր երկրամասներում: Գտնուեց ծովային ճանապարհը դէպի Հնդկաստան՝ անբաւ հարստութիւնների այդ առասպեկտական երկիրը, եղաւ Ամերիկայի գիւտը՝ ոսկու և արծաթէ հանքերի անսպառ մայր ցամաքը: Հարստութիւնների մի սոսկալի տարափ էր կուտակուել Արևմտեան Եւրօպայում: հարստութիւններ, որ Եւրօպական բաղդախնդիրները նոր գտած երկրներում առևտով, խարեբայութեամբ և յափշշակութեամբ կողոպտել էին: Այդ հարստութիւններից առիւծի բաժինն ընկաւ խոշոր առևտրականներին, որոնք հնարաւորութիւն ունէին սպառազինելու նաւերը և

1) F. Engels, «Der Ursprung der Familie, des Privateigenthums und des Staates» եր, 173.

կարգելու նրանց վրայ բազմաթիւ ամրակազմ մարդիկ, նոյնքան յամառ ու դիմացկուն:

Բուրժուական շահերի ներկայացուցիչ և ջերմ պաշտպան վուլգար տնտեսագէտները մեծ առաքինութիւն են համարում բարեկայի սկզբնաւորութիւնը պէտք է որոնել ինայողութեան մէջ: Սակայն Մարքսը տալիս է մեզ կապիտալի ծագման միանգամայն այլ աղբիւները<sup>1)</sup>, ճիշտ համապատասխան այն պատմական-կուլտուրական երեսոյթներին, որոնց չնորհիւ կուտակուել և տնտեսական-հասարակական խոշոր ոյժ է ստացել կապիտալը: Կապիտալիստական ազգերի ամենամեծ հարստութիւնները՝ սկսած 15-րդ դարերի վերջերից, ծագուել են՝ զալուրային քաղաքականուրիւնից, այսինքն օստրերվենցի աւարառուրիւնից, ծագուել են՝ ծովային յափրեսակուրիւնից, մասնանենգուրիւնից, սրբուների առեւտրից, առեւտրական պատերազմներից, զիւլտկուն ազգաբնակութեան ենսպրոպիտիայից և այլն: Ուրիշ խոսքով՝ քաղաքական-առևտրական ոյժն ու աւարառու բըռնութիւնն է եղել՝ կապիտալի ծագման միակ զօրեղ ֆակտօրը և ոչ թէ «ինայողութիւնը»: Այդպիսով առաջանում է ինդուստրիական կապիտալի սկզբնական ակումբուլացիան:

Տնտեսական զարգացման երրորդ ֆազի մէջ կապիտալիստական արդիւնաբերութեան ու տնտեսութեան սիրտեմը համում է իր կատարեալատիս զարգացման: Տեխնիքական գիւտերը՝ սկսած յատկապէս 18-րդ դարի կէսերից, բնագիտութեան, մանաւանդ ֆիզիկայի և

քիմիայի զարգացումը և նրանց արդիւնաւէտ գործադրութիւնը, հսկայական չափերով զարկ տուին տեխնիքական ինդուստրիային, գործարանական արդիւնաբերութեան: Արագութեամբ աճում են կապիտալի բոլոր շահաւետ ֆունկցիաները—որպէս ձեռնարկութեան կապիտալ (Unternehmungskapital), առևտրական կապիտալ, վարկատու կապիտալ, բանկային հաստատութիւնների բոլոր տեսակները և այլն:

Ինդուստրիական կապիտալը իր ծագումով համարում է ամենանորագոյնը՝ կապիտալի միւս երկու տեսակներից—առևտրական և վաշխառուի կապիտալ, որոնց հետ ծանօթացանք մենք, երբ խօսում էինք տնտեսական զարգացման երկրորդ ֆազի մասին: Սակայն կրտսեր եղբայրը իր արագ զարգացումով և վիթխարի ծաւալով միւսներին նուաճել և ենթարկել է իր ծառայութեան: Այնուամենայնիւ տնտեսական—արդիւնաբերական յարաբերութիւնների մէջ մէկը միւսին օժանդակող անհրաժեշտ պայման է համարում: Խոշոր ինդուստրիան, օրինակի համար, սկզբից և եթ մատնացոյց է արուած առևտրի վրայ. միւս կողմից, առետութերը որոշ աստիճանից սկսած իր առաջխաղացութեան համար կարիք ունի կապիտալիստական արդիւնաբերութեան: Որքան վերջինս աւելի է տարածում և տիրապետող զանում, այնքան անհրաժեշտ է դանում առևտրի առաջխաղաց ընթացքը ամբողջ տնտեսական կեանքի համար: Առևտրի զարարը նշանակում է արդիւնաբերութեան դադար, որովհետև մասսայական արդիւնաբերութիւնը անհրաժեշտորէն պայմանաւորուած է մասսայական վաճառքով:

Որքան կարևոր է առևտրի զարգացումի կապիտալիստական ընդհանուր տնտեսութեան համար, նոյն-

1) K. Marx, «Kapital» I հատ., V հրատ., 24-րդ դրույթ՝ «Die sogenannte ursprüngliche Akkumulation», Եր. 679.

քան կարեոր է դարձել նաև վաշխառութեան զարգացումը: Միջին դարի բուժ վաշխառուն մի հայկատակ էր, որ շահագործելով ուրիշների տառապալից վիճուկը կամ քերեւամսութիւնը, ծծում, քամում էր նրանց արինը: Եթէ մի գիւղացի փող էր վերցնում, ապա այդ լոկ նրա համար, որպէսզի վճարէ իր ֆողային տուրքերը և զանազան պրօցեսների (դատական) ծախքերը: Իսկ եթէ մի ազնուական փող էր փոխ վերցնում, ապա նա անում էր այդ ուրախ և զուարձ վատնելու համար: Այդ պատճառով տոկոսով պարտք վերցնելը անբարոյական էր համարւում և բոլոր կողմից դատապարտում:

Բոլորովին այլ է այդ տեսակէտից կապիտալիստական տնտեսութեան շրջանը: Այժմ փողը մի միջոց է, որեւէ կապիտալիստական արդինաբերութեան ձեռնարկելու, աշխատանքի ոյժեր գնելու և շահագործելու համար: Պարտք վերցրած փողը ծառայում է այժմ աւելի շատ աշխատանքի ոյժեր շահագործելու, հետեւ պէս և եկամուտը աւելի մեծացնելու համար, և իրաւաւելի շատ, քան պարտքի տոկոսն է պարունակում: Կանխիկ զրամի գործադրութեան այդ յեղաշրջումով, յեղաշրջում է նաև վաշխառութեան սկզբնական բնաւորութիւնը: Նրա դերը՝ որպէս տառապալից վիճակի և թեթեամտութեան շահագործութեան միջոց, աստիճանաբար յետ է նահանջում այն դերի հանդէպ, որ բեղմնաւում է կապիտալիստական արդինաբերութիւնը, այսինքն հնարաւորութիւն է տալիս, որ կապիտալիզմի զարգացումը դեռ աւելի արագ առաջ գնայ, քան ինեւուատրիական կապիտալիստների ֆողային անդուներում կուտակուած գումարները կարող են այդ հնարաւոր դարձնել: Այլևս դադարում է վաշխառութ

դէմ եղած ատելութիւնը, նա դառնում է անաբատ և ստանում մի նոր, քաղցրահնչիւն անուն՝ կրելիս տուող (վաշխառու): Առաջ վաշխառու կապիտալիստները կուտակում էին փողի գումարները իրանց պահարաններում, որպէսզի այդ լի աւագաններից հազարաւոր խողովակներով հոսեցնեն գէպի ոչ կապիտալիստները: Իսկ այսօր վաշխառու կապիտալիստների փողային մնդուները գարձել են կրեղիտային հաստատութիւնները — ընդհանուր աւազան, ուր հազարաւոր խողովակներով ներս են հոսում ոչ կապիտալիստների փողերը, որպէսզի այստեղից գուրս հոսեն գէպի կապիտալիստները:

3.

Նոր զարերում կազմակերպուած բիւրօկրատների և ուղմիկների կենտրոնական պետութիւնը համապատասխանում էր նոր ծլող ծաղկող կապիտալիստ դասակարգի պահանջներին ձիշտ այնքան, որքան առաջինը կարիք ունէր երկրոգի օժանդակութեան: Մօգերն պետութիւնը քաղում էր իր կենսական միջոցները ոչ թէ անձնական ծառայութիւնից կամ բնական բերքերից ու արդինքներից, այլ բացառապէս դրամական աղբերներից: Այդ պատճառով միապետները շահագործուած էին սեփական ինսերենսների տեսակէտից պաշտպանելու և նվաստելու նրանց — վաճառականներին, կապիտալիստին, — որոնք փող էին ներմուծում երկրի ներսը: Մի երկրի հարստութիւնը կազմում էր այդ երկրի ներսը գտնուած կանխիկ փողի քանաքի մէջ: Իսկ որքան հարուստ է մի երկրի բարձր՝ մողովրդի կենցաղը, այնքան աւելի կարելիութիւն ունի պետութիւնը իր դրամարկղը հարկերով, տուրքերով հարստացնելու:

Այդպէս էր թելագրում ժամանակակից մերկանիքն ն սիստեմը. մի գործնական ձկուն սիստեմ, որ դաւանում էին զրեթէ բոլոր նշանաւոր պետական գործիչները՝ սկսած Կարլ Վ-ից մինչև Թրիդրիխ Մեծը. իսկ նրա ամենատիպիքական արտայայտիչը եղաւ Գրանտիական մինիստր Կոլբերը: Կապիտալիստները փող էին տալիս միապետներին և պետական գանձարանին, գարծնում էին նրանց իրանց պատճառները, զնում իրանցից կախման վիճակի մէջ և այդ միջոցով սովորում էին պետութեան, որ նա հաղորդակցական ճանապարհների ապահովութեան և ընդարձակման միջոցով, անդըրծովքան գաղութների նուաճումներով մրցող առևտրական պետութիւնների դէմ մզած կոիւներով, մենապահառի արտօնութիւններ տալով, և այն, ծառայէ կապիտալիստ դասակարգի շահերին:

Միջնադարեան պետութիւնը շատ հեռու էր ընդհանուր տնտեսական հասարակական ֆունկցիաների զեկավարութիւնից: Դպրոցական հաստատութիւնների, հիւանդների խնամատարութիւնը, հաղորդակցական միջոցների հոգատարութիւնը, անտառապահութիւնն ու ջրաբաշխների զեկավարութիւնը և այլն, բաժին էին ընկնում առանձին համայնքների գործունեութեան: Այդ հետզետէ փոխուեց, երբ տնտեսական ֆակտորնեների զարգացման ոյժով նոր և մանաւանդ նորագոյն ժամանակներում պետութիւնը իր ինքնապատճենիք կարիքների տեսակետից ըստ սգրգութեան գուց միջամտել տնտեսական կեանքի բարդ կառուցուածքի մէջ, ստանձնել իր վրայ ծանրակիցու ֆունկցիաներ և այդպիսով մտնել տիրապետող դասակարգերի—կապիտալիստների եւ խօսոր կ լուսաւաւերերի—շաբաթ: Արևմտական եւրոպայի սահմանադարձն կազմը եւ բուժուա-

կան պարլամենտարիզմը չքացրին պետական կազմի վրայից ֆէօդալական—աբսոլյւտիստական վերջինհետքելը և զրօշմեցին նրա վրայ բուժուալի ն—դասակարգային պետութիւնը: Այսինքն մի պետութիւն, որի գոյութան կրուանը կազմում է տիրապետող դասակարգը՝ բութուալիստներին. մի պետութիւն, որի հաջոամբական շրջանում համարւում է բութուալիստներին դասակարգային իդեալը և որի յարատեութիւնը՝ իր գասակարգային ամրակուու ֆունկցիաներով, պայմանաւորուած է բութուալիստի տիրապետութեան յատեւութեանը:

Ժամանակի ընթացքում պետական նոր մարմինը դարձաւ մի վերին աստիճանին բարդ և բազմաճիւղ ապարատ, որի ծալքերում կենտրոնանուած էին հասարակական—անտեսական կարևորագոյն ֆունկցիաները: Նա ոչ միայն ստանձնեց իր վրայ միջնադարեան համայնքների հոգացողութեանը թողնուած վերոյիշեալ հաստատութիւնները, այլ և կապիտալիստական տնտեսութեան սիստեմի զարգացման ազգեցութեամբ նրա համար աւելի ու աւելի են աճում այնպիսի ֆունկցիաներ, որոնց միջոցով պետութիւնը խորապէս շօշափեց տնտեսական կեանքը արմատները: «Եթէ անհրաժեշտ էր—ճիշտ նկատում է կառուցկին—որ հին ու միջին դարերի պետական քաղաքագիտները առաջնապէս դիպլոմատներ և իրաւուբաններ լինէին, ապա այժմ պէտք է կամ գոնէ հարկաւոր է, որ նրանք առաջնապէս բարակասենեն լինեն»:<sup>1)</sup> Տնտեսական զարգացումը հարկագրում է պետութեան շարունակ իր ձեռքը կենտրոնացնելու մէծ քանակութեամբ արդիւնաբերական ճիւղեր: Միջին դարերում պետական ոյժը իր կարու-

<sup>1)</sup> K. Kautsky, «Das Erstürter Programm» կր. 126.

զութեան ամենամեծ մասը քաղում էր պետական կալուածատիրութիւնից։ Դա յաճախ գեռ աւելի էր բարձրանում 16, 17 և 18-րդ դարերում եկեղեցական և գիւղայիտական կալւածներով։ Միւս կողմից, սակայն, իշխանի գրամական տագնաապը ստիպել է արքունական կալուածը վաճառելու կապիտալիստի վրայ։ Բայց շատ երկրներում դրանցից գեռ բաւական քանակութեամբ մնացորդներ կան այժմեան արքունի կալուածների և լեռնահանքերի մէջ։ Միլիտարիզմի զարգացումը աւելացրեց նրա վրայ զինանոցներ եւ նաւազորդարաններ, հազորդակցութեան զարգացումը՝ փոստներ, երկ սրութիւններ, նեռազիրներ. վերջապէս պետութեան ֆինանսական կարիքները այնքան են աճում, որ նրան հարգադրում են ձեռնարկելու բանկ լի հաստատութիւնների, ինդուստրիական ձեռնարկութիւնների և ամեն կարգի մենաւաճառութեան։ Մի խօսքով ժողովրդական տնտեսութեան շրջանում պետութիւն ասածդ չի ներկայացնում այլևս միայն մի քաղաքական-ոստիկանական կազմ ու պատրաստ ոյժ, որ ըստ Մանչէստրեան դրացի պիտի ապահովէր միայն կապիտալիստ գասակարգի տնտեսական-առեստրական արշաւանքները՝ երկրի ներսոն ու գուրսը, պիտի սոնձայտե արտ. Ֆին արց կը ցներին և ներքին խոռվայոյզ պրօինտրիատին. ոչ այժմեան պետութիւնը դրանով հանդերձ նաև ամենախոշոր կապիտալիստն է, որ ստանձնել է իր վրայ հըսկայական արդիւնաբերական ձեռնարկութիւններ։

Տնտեսական զարգացման երլող ֆազի ամենառաշագրաւ երևոյթներից մէկը կազմում է հանարակական

կազմի լոյն դիմերենցիցիան. մի երեսյթ, որ բացառապէս արդիւնք է համարւում աշխատանքի բաժանման զարգացման և տնտեսական փակտորների հասունութեան:

Միջին դարերում ձեռնարհեստային մասն արդիւնաբերութեան պրօցեսին մասնակցում էին սեփականատէը վարպետներ փոքրաթիւ գործառներով կանաչը շաբախական մեծ ու նորագոյն դաքանական ու շակերտներով, իսկ նոր ու նորագոյն դաքանական արդիւրում կապիտալիստական մեծ ու վիթխարի արդիւնաբերութիւնների պրօցեսին մասնակցում են մենաշավաճառ կապիտալիստ անհատներ և հարիւրաւոր ու հազարաւոր սեփականազուրկ բանուորներ: Այդպիսով նոր ու նորագոյն գարերը, երկու խոշոր, ինտերեսներով հակադրող բանակիներ են արտաքերել, որոնք սկիզբ առնելով մասնուֆակտուրային արդիւնաբերութեան շրջանից, հասան մինչև օրս—տեխնիքական ինդուստրիայի կատարելատիպ գարգացման շրջանում—հաստիացի կատարելատիպ գարգացման շրջանում—հաստիացի կատարելատիպ գարգացման շրջանում: Մէկը՝ բռւրժուածունութեան բարձր աստիճանին: Մէկը՝ բռւրժուածունութեան բարձր աստիճանին: Մէկը՝ բռւրժուածունութեան բարձր աստիճանին:

Սիւ կորմից, զուտ ինդուստրիական սահմանից գործութեական կեանքից դուրս, գտնում ենք զիւղա-  
տնտեսութեան սահմանում երկու դասակարգեր — խո-  
շոր կալուածատէրեր և մանր զիւղացիներ, — որոնց ի-

դաշն է ընդհանուր առմամբ տգրութեական ձգտումներն ու ժամանակակից ան կօնսերվածիզմբ: Սակայն տնտեսական զարգացումը և սօցիալական կեանքի անժխտելի էվոլվցիան այդ սահմանում ևս առաջ է բերել զգալի մետամօրք փող: Եւ այն չափով, որով տեխնիքական ինդուստրիան մուտք է գործում գիւղանտեսութեան մէջ և մի կողմից խոշոր կալուածատիբոջ գարճում նաև կապիտալիստ, իսկ միւս կողմից մանր գիւղացիական տարրին պրոլետարացնում, նոյն չափով այդ գասակարգերի շահերն ու ձգտումները մերձեցնում են գործարանական կապիտալիստ և պրոլետար գասակարգերի շահերին ու ձգտումներին. այսինքն հետզհետէ ընդհանրանում են ողջ հասարակական կազմի մէջ միայն երկու հասարակական կապիտալիստ և պրոլետար գասակարգերի շահերին ու ձգտումներին. այսինքն հետզհետէ ընդհանրանում են ողջ հասարակական կազմի մէջ միայն երկու հասարակական կապիտալիստ և պրոլետար գասակարգերը և խոշոր կալուածատիբը) և բնդիմնուր պրօլետարական (որի գրօշակալիբը է՝ համայն պրոլետարիատը, քաղաքային ինդուստրիայի թէ գիւղատնտեսութեան մէջ): Այսօր ագրարական կօնսերվատիզմն ու կապիտալիստական լիբերալիզմը կանգնած են սահմանադրական եւրոպայում գոյութիւն ունեցող միևնոյն քաղաքական-հասարակական մի խօսքով՝ բուրժուական հայեցակէտի վրայ: Նրանց ունեցած չնչին տարբերութիւնները հետզհետէ հարթուում ու հաշտուում են միմեանց հետ այնքան և այն արագութեամբ, որքան համայն պրոլետարիատի քաղաքական-հասարակական արմատական իդէալը աւելի ու աւելի աճում, հզօրանում է և կենսունակութիւն ստանում օրէցօր:

Սակայն աշխատանքի բաժանումը այն աստիճան է կատարելագրծուել, որ գասակարգային դիֆերենցիացիայով առաջացել է և մի այլ ոչ պակաս խոշոր

ու հետզհետէ ստուարացող դասակարգ: Այսօր միջին դաս (Mittelstand) կոչող արհեստաւորների, մանր վաճառականների կողքին բաեւ, աճել է մի երկրորդ միջին դասակագ՝ առաջնից տարբեր իր սօցիալական դիրքով ու զբաղմունքով. գա ընդհանուր ինտելիգենցիան է՝ մըս ուր աշխատաւորներ (Kopfarbeiter), «կրբուած պրօլետար», «ցեբիլդետե Proletariat»,— ինչպէս կառուցկին է անուանում — սկսած տեխնիքական — առևարական կրթութիւն ստացած և կոչում ունեցող խաւերից մինչև մասնաւոր կոչումների (փաստաբան, բժիշկ և այլն), հասարակական հիմնարկութիւնների, կրթական—գիտնական հաստատութիւնների բոլոր մտաւոր գործիչները: Ներկայ կապիտալիստական տնտեսութեան սիստեմի մէջ կրբուած լինելը դարձել է մի առանձին գործ: Գիտելիքների չափը անվերջ ընդարձակուել է և աճում է օրէցօր: Եւ կապիտալիստական հասարակութիւնը, ինչպէս և կապիտալիստական պետութիւնը, աւելի կարիք ունեն գիտութեան ու առեւտրի ներկայ սցուցիչներին՝ իրենց գործերը առաջ տանելու և բնութեան ոյժերը նուածելու համար: Ոչ միայն գիւղ սցին, արհեստաորդ կամ անդամ պրօլետար, այլ և վաճառ կանք, գործարանատերը, բանկատերը, բօրս լին սպեկուլ նոր, մեծ կալուած ստեր ամեննեին ժամանակ չունեն իրանց նուիրելու արուեստի ու գիտութեան: Շահագործող դասակարգերը ձգում են այդ գործնէութիւնը մի առանձին դասակարգի վրայ, որին նրան վճարում են զրա համար: Այսօր կրթութիւնը դարձել է մի ապրանի ճշշտայնպէս, ինչպէս պրոլետարի փիզիքական ոյժը: Մի տեղ մտաւոր աշխատանքի շահագործութիւն, միւս տեղ փիզիքական աշխատանքի շահագործութիւն: Տարբերութիւնը կայանում է միայն նրա մէջ, որ մտաւորա-

պէս շահագործուողը աւելի լաւ վարձատրուելով, ունի նաև աւելի բարձր կենցաղ ու սօցիալական դիրք, քան Փիզիքապէս շահագործուողը, թէս վերջնիս աշխատանքը աւելի ինտենզիվ ու արդիւնաւէտ է, քան առաջինը:

Այսպէս ահա տեսնում ենք, որ անտեսական բազմանիւղ ֆունկցիաների և խոշոր ֆակտորների յառաջադիմութեամբ, աշխատանքի բաժանման զարգացումով, առաջացել է դասակարգային լայն դիմերենցիացիա, փոխուել է դասակարգերի զարգացումն ու փոխազդեցութիւնը: Իսկ այդ երեսոյթով խոշոր ձևափոխման հնիթարկուած սօցիալ. և օրգանիզմի ընդունել է սօցիօօգի և սի մի առ անձն ոյ առոկ դրօւ, բոլորովին տարրեր միջնադարեանից:

5

Տնտեսական զարգացման երրորդ ֆազի կամ ժողովրդական անտեսութեան վերաբերեալ ունեցած մերդիտողութիւնները լրիւ չեն լիսիւ, եթէ մենք մի քանի խօսքով չյիշատակէինք այն շարժումները, որոնք բընականօրէն առաջացել են անտեսութեան նոր ձևերի և յարաբերութիւնների ազդեցութեան տակ:

Եթէ ուշագրութեան առնենք ժողովրդական տընտեսութեան զարգացման ամբողջ ընթացքը, սկսած նոր դարերի սկզբնաւարութիւնից մինչև այժմ, կը գտնենք անտեսական հասարակական հոդի վրայ չորս տարրեր հոսանքներ — մերկանութիւննեն, տնտեսուկան լիբերալիզմի, սօցիոլական և սօցիո-լիստական հոսանքները: Մեր նիւթի ծաւալի սահմաներից շատ ճեռու կանցնէինք, եթէ մանրամասն խօսէինք այդ հակազրական շարժումների և նրանց առաջնակարգ մտաւոր ներկայացուցիչների:

մասին: Ուստի նկատենք միայն հետեւալը:

Որքան մերկանտիլեան սիստեմը անհրաժեշտ էր համարում առևտրական-մանուֆակտուրային ձեռնարկութիւնների մէջ մենավաճառութիւններն ու մենաշնորհումները, որքան նա առաջ էր կոչում ժամանակակից միահեծան պետութեան աջակցութիւնը՝ տնտեսական ֆունկցիաների մէջ, մանաւանդարտաքին առևտութեան ապահովելու համար, որ կանխիկ դրամ էր հոսեցնում երկրի ներսը, այնքան էլ գրածիշտ հակառակը վարուեց տնտեսական լիբերալիզմը:

Ֆիզիօկրատները և ապա 18-րդ դարի երկրորդ կէսից սկսած անտեսալիտութեան կլասիք դպրոցի ներկայացուցիչները՝ յանձինս Աղամ Մմիտի, Դաւիթ Ռիկարդոյի, ծայրայեղ հակառակորդներ էին որ և է մենավաճառի և առանձնաշնորհի, պետական որ և է միջամտութեան: Պէտք է քանդել բոլոր սանձահարող կապանեները, ազատութիւն տալ մարդկային ոգուն յասուկ բնուրու մլումներին, որպէս զի ազատ մրցութեամբ ծիւն, ծագկեն ու բարգաւաճեն բոլոր անտեսական կենսունակ ոյժերը, զարգանան ու հասունան տնտեսական ֆակտորներն ու ֆունկցիաները: Laisser faire laisser passer, թող անուի, թող կատարուի վարդապետում էր Մանչեստերեան դպրոցը: Տնտեսական այդ լիբերալիզմը զրկախառնուեց ժամանակակիցքաղաքական լիբերալիզմի հետ, կամ աւելի ծիշտ ծընունդ տուալ վերջինիս, որ անհաշտ կոիւ էր յայտարարում միապետական գահի, ֆէօդալիզմի և կաստայական-կղերականութեան դէմ, և որի ուժեղ արտայայտութիւնների ունեղի ունեցաւ ֆրանսիական մեծ յեղափոխութեան օրով:

Դարձեալ այլ բնաւորութիւն ունի երրորդ կամ

սոցիալական շարժումը, որ վերջին տասնամեակներում ընդգրկել է իր մէջ զբեթէ ակադեմիական բոլոր ոյժերին: Բուրժուական մտածողների ձախակողմեան թերեւեակայում է, որ առանց տիրապետող հասարակական կարգերի գոյութեան արմատները շօշափելու, հնարա որ կը լինի սոցիալ-հիմքական ու հաղաքական մի շաքը թեմօրմերով ժամանակի ընթացքում վերաստեղծելու դասակարգային յարաբերութիւնների հարմօնիա և այդ միջոցով լուծելու սոցիալական կօնֆլիկտը: Սակայն այդ բոլոր բէֆօրմները՝ անտեսական թէ սոցիալական-քաղաքական հոգի վրայ, որոնց իրականացնող մարմինները պիտի լինեն բուրժուական կառավարութիւնն ու պարլամենտը, էապէս ուրիշ ոչխչ չեն, բայց եթէ տիրապետող սոցիալական չարիքը փոքր ինչ մեղմացնող պայիշածիւ միջոցներ: Բուրժուական մտածողները դժուարացան մինչև օրս ընդունելու այն լայն տեսակէտը, որ իւրաքանչիւր խուռ բացասական եւելոյր անհրաժեշտորէն պայմանաւորուած է խուռ արևատական պատճառներով, հետևապէս միայն վերջններիս վերացումը կպայմանաւորէ առաջնի ըլքացումը: Կարկատանք բեֆօրմները ըստ ամենայնի մնջօր պիտի լինեն դասակարգային ներգանակութիւն վերաստեղծելու. արդիւնաբերութեան սիստեմի, տընտեսութեան ձևերի և զրանցով պայմանաւորուած հատեսակական կազմի էլութեան մէջ է թաղուած սոցիալական կօնֆլիկտի հիմնական արմատը. ով ուզում է ոչչացնել այդ արմատը, նա պիտի առաջ վերացնէ նրա նախապայմանները՝ արդի արդիւնաբերութեան սիստեմը: Իսկ այդպիսի ահեղ տեսարանի առաջ միայն սոսկալ գիտէ բուրժուական իդէօլոգիան:

Միանգամայն այլ բան է կապիտալիստական

անտեսութեան ծոցում բնանհրաժեշտօրէն ծնունդ առած սոցիալիստական շարժումը: Նրա գիտողութիւնները դուրս են զալիս այն ճշգրիտ ելակետից, որ սօցիալական կօնֆլիկտի բազիսը (խարիսխը) կազմում է այն անհաշտ հակառակութիւնը, որ ունին այսօրուայ կօլեկտի բնաւորութիւն ստացած արդիւնաբերութիւնը արդիւնաբերութիւնի մասնաւոր իւրացումը, ընդհանուր ընկերական արդիւնաբերութիւն՝ մասնաւոր սեփականութեան իրաւասութեան ներքոյ: Ուրեմն իւրաքանչիւր սոցիալական բէֆօրմ ապարդիւն է ազգեցութեամբ և տեսական գորութեամբ, եթէ նա ոչ միայն չէ շօշափում արդիւնաբերութեան միջոցների, մասնաւոր սեփականութեան արմատները, այլ և պալիատիւ, շատ անգամ խարուսիկ միջոցներով նեցուկ է տալիս նրա երկարատև գոյութեան: Ընդհակառակը, արդիւնաբերութեան միջոցների հասարակական սեփականացումը, որի իւրականացման ձգտում է սոցիալ գեմօկրատարար կազմակերպութիւն պրոլետարիատը, պիտի համարուի միակ գործութեան պայմանները, իսկ դրա հետ միասին բոլոր զժնդակ պայմանները, իսկ պայմանների նաև հետզհետէ սպառնացող սոցիալական կօնֆլիկտը:

Այստեղ անկարող ենք մանրամասն կանգ առնել անտեսական զարգացման երրորդ ֆազի վրայ, ուր ծընունդ առած բազմաթիւ խոշոր երեսյներից իւրաքանչիւրը կարող է մի առանձին թեմայի սիւթ մատաքարագրել: Մենք բաւականացնք միայն նրա տիպի կարագրել: Մենք բաւականացնք միայն նրա տակալու ուշադրութեան առնելով այն հասարակական

երևոյթները, որ տնտեսական նոր սիստեմը իր հետ  
բերել է: Իրեւ եղափակութիւն, առաջ բերենք ստորև  
մի քանի համեմատական գծեր յիշատակած երեք ֆա-  
զերի վերաբերեալ, որոնցով աւելի պարզ ու դիւրը-  
բռնելի կը դառնան ընթերցողի համար զարգացման  
շրջանները բնորոշ կողմերը:

1. Առաջին ֆազի կամ տնային փակ տնտեսութեան  
մէջ աշխատակցութիւնը հիմնուած է էապէս աշխատող-  
ների (տան անդամների) արիւնակցութեան վրայ:  
Երկրորդ ֆազի կամ քաղաքային տնտեսութեան մէջ  
հիմնուած է դա շրջանային կապերի կամ հարեանու-  
թեան վրայ: Վերջապէս երրորդ ֆազի աշխատակցու-  
թիւնը հիմնուած է բավանդակ ագիւ մէջ ամփոփուած  
քաղաքի խաւերի վրայ, որոնք միմիանց հետ օրգա-  
նապէս շաղկապուած են իրանց տնտեսական շահերով  
և գործունէութեամբ:

2. Առաջին ֆազի մէջ իրաքանչիւն իր կամ տնտեսա-  
կան բարիք գործածուում և սպառուում է այն տնտեսական  
սահմանում, ուր նա արտադրուում է: Երկորդ ֆազի մէջ  
իրերը անցնուում են անմիջապէս, անձնական յարաբե-  
րութեամբ՝ արդիւնաբերողի ձեռքը: Իսկ երրորդ ֆազի  
մէջ, ընդհակառակը, արտագրած արդիւնքները են-  
թարկուում են բարդ շրջանառութեան պրօցեսի, ան-  
ցընուում են մի շարք տնտեսութիւնների բովի միջով:  
Արդիւնաբերողը չի ճանաչուում սպառողին և ոչ մի  
յարաբերութիւն չունի նրա հետ: Այդ շրջանումն է, որ  
այնքան արագ աճուում և բարդ կազմակերպութիւն է  
ստանուած առեւտուրն ու առեւրական դաստկարգը:

3. Տնային փակ տնտեսութեան մէջ աշխատանքը  
ծանրանուում է ընտանիքի անդամների վրայ: Իսկ ուր  
օտարի աշխատանքի կարիք է լինում, այնտեղ հան-

դէս է գալիս աշխատաւոր բազուկը յանձինս ստրու-  
կի, ճորտի: Քաղաքային տնտեսութեան մէջ օտար  
աշխատաւորը ծառայի կամ գործաւորի յարաբերու-  
թիւն ունի արդիւնաբերողի հետ (արհեստի մէջ), իսկ  
ժողովրդական տնտեսութեան մէջ նա ունի պայմա-  
նագրական յարաբերութիւն (Vertragsverhältnis). այդ-  
տեղ բանուորը իրաւապէս ազատ մարդ է:

4. Առաջին ֆազի մէջ ինքը սպառողը միևնոյն  
ժամանակ բանուոր է, կամ հակառակ դէպքում բանուո-  
րը կազմում է արդիւնաբերող տան սեփականութիւնը  
(ստրկութիւնը հին դարերում): Երկրորդ ֆազի մէջ  
սպառողը զնում է անմիջապէս բանուորի ծառայու-  
թիւնը (օրինակ վարձու գործ) կամ աշխատանքի ար-  
դիւնքը (ձեռնաբանի մէջ): Իսկ երրորդ ֆազի մէջ ըս-  
պառողը այլ ևս ոչ մի յարաբերութիւն չունի բանուո-  
րի հետ: Նա զնում է ապրանքը կամ արդիւնաբերողից  
և կամ առեւրականից, իսկ դրանք վարձատրում են  
բանուորին:

5. Առաջին ֆազի մէջ աշխատանքի բաժանումը  
գեռ ընտանեկան բնաւորութիւն ունի, սաղմային վի-  
ճակի մէջ է գտնուում, բացակայում է արհեստային  
կոչումը, անհատական ոյժերը միաժամանակ նուիրուած  
են մի քանի զրագունքների: Երկրորդ ֆազի մէջ հետզ-  
հետէ քաղաքներում մասնագիտանում են արհեստա-  
յին կոչումները: Արդիւնաբերութեան ամբողջ պրօցե-  
սը բաժանուած է երկու մասի, առաջ բերելով սօցիա-  
լական տարրեր խաւեր—հում նիւթեր հայթնայթող հո-  
ղագործ գիւղացի և արդիւնքներ պատրաստող արհես-  
տաւոր քաղաքացի: Իսկ երրորդ ֆազի մէջ մինչև ա-  
մենանուը ձեռքը խիստ մասնագիտանում, ճիւղաւոր-  
ում են ինդուստրիական և արհեստային կոչումները:

Արդիւնաբերութեան ամբողջ պրօցեսին անմիջապէս թէ միջնորդապէս մասնակցում են մի քանի սօցիալական խաւեր—բանուոր, կապիտալիստ և առևտրական գասակարգեր՝ կապիտալիստական ձեռնարկութիւնների մէջ՝ ինդուստրիալական—առևտրաշահ քաղաքներում, միջին կարգի քաղաքացիներ (արհեստաւոր, մանր վաճառական)՝ ձեռնարհեստային մանր արդիւնաբերութեան մէջ, վերջապէս մանր գիւղացիութիւն և խոշոր կալուածատէրեր՝ գիւղատնտեսութեան մէջ:

6. Տնային փակ տնտեսութեան մէջ փող կամ բոլորովին գոյութիւն չունէր, կամ թէ չէ ծառայում էր բերք գործածական իր կամ գանձելու միջոց: Քաղաքային տնտեսութեան մէջ նա արդէն ծառայում էր իրը և էապէս փոխանակութեան միջոց: Իսկ ժողովրդական տնտեսութեան մէջ փողը ծառայում է արդէն որպէս փոխանակութեան, շրջանառութեան և հայթհայթման միջոց: Այդպէս փողը ստանում է նոր ու նորագոյն դարերի տնտեսական կետնքում բազմաթիւ փունկցիաներ և դառնում ամենախոշոր հասարական ֆակտոր:

7. Առաջին ֆազի մէջ գրեթէ կապիտալ գոյութիւն չունէր, այլ միայն գործածական իրեր: Երկրորդ ֆազի մէջ արդէն աշխատանքի գործիքները պատկանում են արդիւնաբերութեան կապիտալի (Produktionskapital) կաթեգորիային: Իսկական հայթհայթման կապիտալը (Erwerbskapital) զարգացման այդ շրջանում կազմում է միայն առևտրական, ապա վաշխառուի կապիտալը: Իսկ երրորդ ֆազի մէջ հայթհայթման կապիտալը դառնում է մի միջոց արդիւնքները աշխատանքի բաժանման մի էտապից բարձրացնելու միւսի մէջ, անցնելով ամբողջ շրջանառութեան պրօցեսի միջով: Այստեղ ամեն բան դառնում է կապիտալ: Տնտեսական իրաքան-

չիւր խորշ կրում է իր վրայ կապիտալիզմի դրօշմը: Տեխնիքական տերմինը ներկայ անտեսութեան իրաւամբ անուանում է կապիտալիստական տնտեսութիւն:

Տնային, բաղադային եւ ժողովրդական տնտեսութեան ֆուզեր—սա դարերի պատմական-օրգանակական զարգացման մի անընդմիջող շղթայ է ներկայացնում, ուր սրտամբոլ, վաստակոլ ու սպառող ձեռքերի սակաւորիներ և ֆունկցիաների պարզութիւնը՝ աստիճանական զարգացումով բազմանում, բարդանում և հազար ու մի ձիւղերի է բաժաննում, դառնում է մի վիրխարի ու կօմպլեխ օրգանիզմ: Տնտեսական զարգացման թէօրիան զբաղւում է միայն այն երկրների և ազգերի (արևմտեան եւրոպան) տնտեսութեան սիսեմներով, որոնք մաշել են տնտեսական զարգացման ամբողջ ընթացքը և հասել նորագոյն սիստեմին: Եւ եթէ այդ թէօրիան պատմական անցեալ է համարում տնային ու քաղաքական գրեթէ տնտեսութիւնը, որպէս զարաւոր տիրապետող սիստեմներ, ապա նա չի մոռանում ամեննին, որ այժըմ իսկ կան խոշոր երկրամասեր և բազմաթիւ ցեղեր, ուր տնտեսութեան այդ ձեր գեր նահապետական է, և ուր զարգացման գեռ շատ տարիներ են հարկաւոր, որպէս զի արդի եւրոպական կապիտալիստական սիստեմը տնտեսութեան տիրապետող ձեր դառնայ:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ'

Օտար խօսքերի բառաթերթ

Շատ օտար բառեր ու տեխնիքական արտայայ-  
տութիւններ կան, որոնց ոչ գործածութիւնը և ոչ էլ  
թարգմանական նշանակութիւնը մեր մէջ համատարած  
քաղաքացիականութիւն չեն գտել: Կան տերմիններ,  
որոնց հայերէն ընդունուած թարգմանութիւնը լրիւ չէ  
արտայայտում այն ամբողջ իմաստն ու բովանդակու-  
թիւնը, ինչպիսին ունի օտարազգի բառը կամ տեր-  
մինը օտար լիզուի մէջ: Այդ պատճառով է հէնց, որ  
մինք շատ յաճախ ստիպուած ենք եղել օտար բառեր  
գործածելու: Ընթերցողին դիւրութիւն տալու համար  
մենք կցում ենք դրբոյկիս օտարազգի դժուար խօսքե-  
րի այս բառաթերթը, մի կողմ թողնելով բոլոր յայտնի  
և ժողովրդականացած տերմինները:

Ա.

Աբսոլիտիզմ—միահեծանութիւն:

Ագրիկուլտուրա—երկրագործութիւն, հողագործութիւն:

Ակս—գործողութիւն:

Անտիբեզ—հակադրութիւն:

Անտիկ—հնարուեստ, հնօրեայ:

Աւտօնոմ—ինքնավար, ինքնօրէն:

Բ

Բազիս—խարիսխ:

Բիւրօկրատիա—(բառացի) դիւանատան տիրապետութիւն. պաշտօնեաների կամայականութեան տիրապետութիւն:

Գ.

Դեսպօս—բոնակալ:

Դեֆինիցիա—որոշումն, սահմանաւորումն:

Դիագնօօ—նշանացոյց (ախտացոյց՝ բժշկական հետազոտութեան դէպքում)

Դիմենզիօն—չափ, մարմնի տարածութիւն ըստ երկարութեան, լայնութեան և հաստութեան:

Դիպլօմատ—դիւանագէտ:

Դիթերենցիացիա—բաժանումն, տարբերութիւն (հասարակութեան մէջ):

Ե

Էպօխա—դարագլուխ:

Էտապ—շրջան.

Էտնօգրաֆիական—ազգագրական:

Էվլիւցիա—զարգացում:

Էխապլօատացիա—շահագործութիւն:

Էխապրօպրիացիա—մնութիւնականացում, ունեցուածքից դրէլ:

Թ

Թեզ, թեզիս — բնաբան, դրութիւն (վիճաբանական նիւթի)

Թէկիօլօգիական պրինցիպ — նպատակայարմարութեան սկզբունք:

Թէկորիա—տեսութիւն:

Ի

Իրէկօլօգիա—տեսլագիտութիւն:

Ինդուստրիա—արուեստագործութիւն, արդիւնագործութիւն:

Ինսինյուր:

Ինսինյուրցիա—հիմնարկութիւն, հաստատութիւն:

Լ

Լիբերալիզմ—ազատամտութիւն:

Կ

Կարեգօրիա—բաժանմումք, դասաւորում:

Կառագալ—պատճառակցական:

Կասիֆ—զասական:

Կրիսերիում—յայտանշան, նշանացոյց, չափ:

Կրիտիկա—քննադատութիւն:

Կոմպլեքս—բովանդակութիւն, մանոււածալաւ:

Կօսունիստական: Համայնավարական:  
 Կօնսերվատիզմ—պահպանողականութիւն:  
 Կօնսրաս—հակապատկեր, հակատիպ:  
 Կօնֆլիկտ—պայքար, ընդհարում:  
 Կօնֆօրմ—քեղ, փառահեղ:  
 Կօրիֆեկտ—պարագլուխ, առաջնակարգ ներկայացուցիչ:  
 Կրեդո—դաւանանք (քաղաքական):

Հ

Հարմօնիա—ներդաշնակութիւն:

Մ

Մանուֆակտուր—ձեռագործութիւն, տարագործութիւն:

Մասսայ—զանգուած, խուռն բազմութիւն:

Մատերիալիզմ—նիւթապաշտութիւն:

Մագիստրաս—քաղաքային խորհուրդ:

Մաստաբ—չափ:

Մերկանտիլեան—առևտրական:

Մետաօքիա—կերպարանափոխութիւն, յեղաշրջում:

Մինիստ—նախարար:

Մօդուս—ձեռ ու եղանակ

Մօմենտ—բոպէ, շարժառիթ:

Մօնօքրաթիա—մենագրութիւն:

Մուտատիս—այս կամ այն կարևոր փոփոխութիւններով:

Ն

Նօրմա—կանոն, կանոնաչափ:

Պ

Պալիատիւ—առժամանակեայ մեղմացնող միջոց:  
 Պարագիս—հացկատակ, ձրիսկեր:  
 Պատրիկ—արտօնեալ քաղաքացի (հին Հռովմում):  
 Պերսոնալ—անձանց (պաշտօնակից) հաւաքական թիւ:  
 Պրիմիտիւ—նախնական, սկզբնական:  
 Պրինցիպ—սկզբունք:  
 Պրօցես—ընթացք, գործողութիւն:  
 Պրօքրես—յառաջադիմութիւն:  
 Պօսուլաս—պահանջ, պահանջողական կէտ:  
 Պօտենցիալ—կարողութիւն, կենդանի ոյժ, գործելու ընդունակութիւն:

Ս

Սիմպոզիում—նախանշան, արտաքին երկոյթ:

Սիներեզ—համադրութիւն, միաւորում:

Սիստեմ—յաջորդականութիւն, յաջորդաբար միաւորուած ամբողջութիւն:

Սպեցիֆիկ—ռասանձնայատուկ:

Սրտկուրա—կառուցուածք:

Սուբիեկտ—անձ (ենթակայ, քերականութեան մէջ).

Սօցիալական—ընկերական, հասարակական:

Սօցիալիստական—ընկերավարական:

Սօցիօգիական—ընկերաբանական:

S

Տերիսօրիա.—սահման, շրջան, հող, որոշ սահմանագը-  
ծուած երկիր:

Տեխնիկա.—արուեստագործութիւն կամ արհեստագոր-  
ծութիւն:

Տիպիֆ—բնորոշ, կազմակարուած, տիպար օրինակ:

Տրիադ—երրորդութիւն (Հեգելի դիալեկտիկայի մէջ):

P

Պէտօրմ—բարենորոգում:

O

Օրգանիզմ—ներքին կազմուածք, յօրինուածութիւն:

Թ

Ֆակտօր—գործօն, ազդակ:

Ֆազ, ֆազիս—աստիճան, շրջան:

Ֆենօմեն—երկոյթ:

Ֆեղալական—աւատական:

Ֆիզիօկրատիա—բնութեան տիրապետութիւն (անտեսա-  
գիտական սիստեմ՝ 18-րդ դարում):

Ֆունկցիա—կոչում, պաշտօն, գործողութիւն:

Վ Ե Բ Զ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես	
1. Նախաբան.	3 — 6
2. Տնտեսական զարգացման թէօրիաները	7 — 22
3. Տնային փակ տնտեսութիւն.	23 — 36
4. Քաղաքային տնտեսութիւն	37 — 46
5. Ժողովրդական տնտեսութիւն	47 — 71
6. Յաւելուած	73 — 78



Edinburgh 1999



ՀՀ Ազգային գրադարան



NL0264707

